

լուսոյնընդհանրէն կը նշմարուին հակառակ մթու-  
թեան եւ յարձակումի կ'ենթարկուին: Աման-  
շահ ծանրապէս կը վերաւորուի եւ կը ստի-  
պուի վերադառնալ բանակ: Արդունշահ եւ  
միւս քաջերը կը բարձրանան ուրիշ ժայռա-  
կամար մը, որուն լայնութիւնն էր 300 կան-  
դուն. եւ այսպէս կը հասնին միջնաբերդին  
պարիսպին ներքեւ: Կը սկսին գործի. կա-  
ցինով, քարհատով, մուրճով ու բրնձով քիչ  
ժամանակէն կը փլցնեն պատը եւ կը յարգա-  
րեն բացուածք մը նեցուկներով: Սպաներն  
ու պահապան զօրքը տեսնելով թէ այլ եւս  
ամէն բան կորսուած է իրենց համար, չեն  
ուզեր դիմադրել: Կը լքեն իրենց առաջ-  
նորդը, ոմանք յուսահատ կը նետուին ան-  
դունդն ի վար. իսկ մնացածները բարձրա-  
ձայն կ'աղաղակեն ու կը բողբոջեն Մըսրի  
դէմ, ըսելով թէ իրենք անձնատուր պիտի  
ըլլան: Իշխանը կը ջանայ իր մարդիկը հան-  
դարտեցնել եւ այս անգամ հաշտութեան հա-  
մար իր մայրն ու որդին կ'ուղարկէ Թիմուրի,  
որ մօր մը աղի արտասուքներէն զգածուած  
կը խոստանայ ներել եւ կեանքը չնորհել:  
Մըսրը բռնադատուած վերջապէս կը լքէ ամ-  
բոցն եւ կ'իջնէ ներքեւ վրին պատած պատան  
մը եւ մերկ սուսեր ի ձեռին» (Հատ. Բ.  
գիրք Գ. էջ 298—311):

Թիմուր ամբողջ կը յանձնէ Ատրմիշ զօ-  
րավարին եւ անոր գրաւման առթիւ կը կա-  
տարէ յաղթութեան տօն մը լի խրախմածներով,  
որ կը տեւէ չինգ օր: 1394 Օգոստոս 21ին  
կը մեկնի Ալաղաղ եւ կը դիմէ Այդին =  
(Գարիւնք) նշանաւոր բերդին դէմ. կարճա-  
տեւ պաշարումէ մը յետոյ տեղւոյն տէրը  
Բայազիդ կը հպատակի եւ ներման կ'արժա-  
նանայ եւ վերստին կը հաստատուի իր նախ-  
կին տէրութեան մէջ (անդ, էջ 313—315):

Այստեղ Ծաղկոտն գաւառի մէջ մեծ  
հանդէսներ կատարելէ յետոյ կը մեկնի Վրաց  
դէմ, նախ Կարս, ապա Տփղիս (անդ, էջ  
315—317):

Վրաստանի արշաւանքէն կը դառնայ  
Աւնիկ, ուր կը գտնէ զօրավար Ալազղաղ:  
Այս տեղէն կ'ուղղուի Կարին-Յրզնիկա նուա-  
ճելու համար Սերաստիան (անդ, Հատ. Գ.  
Գիրք Ե., էջ 263): Գարձեալ Թիմուր 1402ին  
գարնան Վրաստանէն կու գայ Աւնիկ, ուր կը  
մնայ երկու ամիս սպասելով պատգամաւոր-  
ներու վերադարձին, որոնք գացած էին սուլ-  
տան Բայազիդի: Յետոյ կը մեկնի Կարին,  
ուր կու գան կը միանան իրեն զօրավարներ

իրենց բանակով Ալաղաղ-Աւնիկ ճանապար-  
հով (Հատ. Գ. Գիրք Ե., էջ 410—412):

Միւրդա Մէհմէդ՝ Թիմուրի սրտի հա-  
տորը, երբ կը մեռնի, զիակը կը փոխադրուի  
նախ Աւնիկ եւ ապա Սուլթանիա (Հատ. Գ.,  
էջ 69—70):

Թիմուր՝ սուլթան Բայազիդի յաղթելէ  
եւ անոր բովանդակ ասիական երկիրը նուա-  
ճելէ յետոյ, կը մտադրէ դառնալ Աւնիկ, կը  
հրամայէ արքունի ընտանեաց անյապաղ գալ  
միանալ այնտեղ: Ինքն իր բովանդակ բանա-  
կով Յրզնիկ-Կարին ուղիով կու գայ Աւնիկ  
եւ կը պատուիրէ նաեւ իշխաններու եւ զօրա-  
վարներու գալ հոն տիկիներէ առաջ: Իշ-  
խանուհիները Թաւրիզէն կը մեկնին եւ երբ  
Աւնիկ կը հասնին, կը լսեն Մէհմէդի մահը,  
թուխ կը զգենուն եւ բոլոր արքունիքն ու  
բանակն առհասարակ կ'ողբան վաղաժամ  
մահը քաջ Մէհմէդի եւ նուիրական հոգե-  
հացով մը կը նուիրագործեն անոր յիշատակը  
(անդ, էջ 80—86):

Շերեֆեղդին կը վերջացնէ իր տեղեկու-  
թիւններն Աւնիկի մասին հաղորդելով մեղ,  
թէ «Երբ Թիմուր կը վերադառնար իր մայ-  
րաքաղաքն Արդեբիլի եւ Միանայի վրայէն  
անցնելով, կը մտնէ Սերճեմ, ուր ընդ առաջ  
կու գայ իրեն Աւնիկի իշխանը Դուլաղայ  
Բեկ» (անդ, էջ 151):

(Շարունակելի): Է. Պ. ՏԵՐ-ՊՕՂՈՍԵԱՆ



**ԵԿԵՆՅ ԿԵՄ ԵԿՆԵՐԻ ՎԵՆՔԸ**

Հայկական Կիլիկիոյ լեռնային կողմերը,  
Մուշէոն, Բարձր, Լեւոն Կլայ եւ Անդրունին  
անառիկ բերդերու հովանոյն տակ ժԲ.—  
ժԳ. դարերուն ծաղկեցան բազմաթիւ վա-  
նական հաստատութիւններ: Չանոնք կը հիւ-  
րնկալէր գլխաւորաբար Յախուտ գաւառը,  
որ կը տարածուէր Բարձրբերդի ստորտը,  
հիւսիս-արեւելք ուղղութեամբ: Այդ վան-  
քերն են.

1. Ականց կամ Ակների, «մերձ յա-  
տուածապահ ամբոցն, որ կոչի Անդրունին  
բերդ» (Թ. 20) <sup>1</sup>:
2. Անդրիասեանց, «մերձ յանառիկն  
Գղեակ Բարձր անուն կոչեցեալ <sup>2</sup>»:
3. Առակլի, տե՛ս Խորին:
4. Գոների, «ի Գահս Կիլիկիոյ, ի գա-  
ւառն բերդին Բարձր ասացելոյ». «մերձ ի  
Բարձրն կոչեցեալ բերդ <sup>3</sup>»:
5. Թիւրքթի, «մեծ եւ հռչակաւոր անա-  
պատս որ կոչի Թիւրքթի... տեղիքս լեռ-  
նային <sup>4</sup>»:
6. Լիսոնկայ, «ի լեւոն Կարմիր, մերձ  
յանառիկ գղեակն Բարձրբերդ <sup>5</sup>»:
7. Խաչատրոյ, «մերձ ի բերդս Բարձր,  
ի վերայ գետոյս Շղրկայ ի քարանձաւ եւ ի  
նեղ տեղիս». «մերձ ի Գոներ <sup>6</sup>»:
8. Խորին կամ Խորնին, «Առակլի», «որ  
է մերձ ի սահմանս Բարձր բերդոյ եւ Լեւոն  
Կլային, անառիկ գղեկացն». «յԱնապատի  
Առակլի, որ անուն Խորին ճանաչի <sup>7</sup>»:
9. Ծիծեռնարոյն եղն (°). Լիսոնկայ  
զրուած ձեռագիր մը կ'աւարտի «ի յանա-  
պատս Ծիծեռնարոյն եղն <sup>8</sup>»:
10. Չորոյ Ս. Թորոսի <sup>9</sup>:
11. Միակեցեր <sup>10</sup>:
12. Պօղոսեան անապատ մերձ ի Գոներ <sup>11</sup>:

<sup>1</sup> Գրուածքին վերջը գետեղած եմ այն Յիշատա-  
կարանները, որոնք կը հայն Ակների վանքի պատմու-  
թեան. փակագծի մէջ առնուած 1—25 թուերը կ'ակ-  
նարկեն այդ Յիշատակարանները:  
<sup>2</sup> Սխուան, 149:  
<sup>3</sup> Սխուան, 144—146. էջմ. Թ. 182:  
<sup>4</sup> Սրուանձտեանց, Թորոս Աղբար, Բ., 449—450:  
Սխուան, 156 եւն:  
<sup>5</sup> Բանասէր, 1899, էջ 129—130: Հմմտ. Սի-  
սուան, 153:  
<sup>6</sup> էջմ. 182 (յամէ 1303):  
<sup>7</sup> էջմ. Թ. 617 եւ Երուսաղէմ, Թ. 596. Վիեննա,  
Թ. 324 (Յուլ., էջ 771): Հմմտ. Սխուան, 151—152:  
<sup>8</sup> Բանասէր, անդ: Այլուտա ինձ անձանթ:  
<sup>9</sup> Տես վարք Թ. 19: Հմմտ. Սխուան, 150:  
<sup>10</sup> Սխուան, 153:  
<sup>11</sup> Անդ, 147:

13. Փերճեր. Կոստանդին Հեթմնցի,  
1311ին կ'օրինակէ Աւետարան մը «ի Չորս  
Խորնի... ի խցկան միտջ, որ է հարաւակողմն  
Պերճ անապատիս <sup>12</sup>»:

14. Փոսի, «ի գաւառիս Յախուտ կոչե-  
ցեալ, յաչխարհիս Կիլիկեցոց, յանապա-  
տիս որ կոչի Փոս <sup>13</sup>»:

Մէկ կողմէ երկրին քաղաքական ապա-  
հովութիւնը չնորհիւ անառիկ ամրոցներուն,  
միւս կողմէ իշխաններու եւ թագաւորներու  
նիւթական եւ բարոյական հովանաւորու-  
թիւնը քաջալեր եղան հոգեւէր հաւատա-  
ցեալներու նուիրուելու վանական կեանքի:  
Կերեւայ թէ երկրին տիրապետներուն ալ  
ցանկութիւնն եղած է պաշտպանել իրենց  
սահմաններն ոչ միայն բազիլի ոյժով, այլ եւ  
կրօնաւորներու աստուածահաճոյ աղօթքնե-  
րով:

Մենաստաններս, որոնք ունէին ներքին  
կազմակերպութիւն եւ բնակուած էին մեծա-  
թիւ անդամներով, հանդիսացան արտաքին  
փայլ Հայոց Եկեղեցոյ ներքին զարգացման,  
այլ եւ հայ մշակոյթի կենդաններ, ուր կը  
մշակուէր գրտութիւնը, գրչութեան ա-  
րուեստը, կը յարգուէին նախնեաց գրական  
արտադրութիւնները եւ նոր օրինակներով կը  
յաւերժացուէր անոնց գոյութիւնը. շատ բան  
նախնեաց մատենագրութենէն հասած է մեղի  
Կիլիկեան արտագրութիւններով:

Յորքան ամուր էին Հայկական Կիլի-  
կիայի սահմանները, անդորր՝ երկրին քաղա-  
քական կեանքը, ծաղկման վիճակի մէջ էին  
վանքերը: Անոնք կը սկսին խամրիլ, կամաց  
կամաց իրենց գործունէութենէ դադրել, երբ  
ներքին կռիւները ծայր կ'առնէին եւ կը թու-  
լանար արտաքին սահմաններու պաշտպանու-  
թիւնը: Դատելով մեղի հասած ձեռագրա-  
կան յիշատակարաններէ, Կիլիկեան Հայաս-  
տանի մենաստանները կը լսեն սկսեալ 1336է:  
վերոյիշեալ վանքերէ չունինք որ եւ է ձե-  
ռագիրներ 1335էն սկսեալ. միայն 1418ին կը  
գտնենք ձեռագիր մը, ժողովածոյ խրատա-  
կան իրաց, գրուած Տօնական երէցի գրչէն  
«ի Խորին անապատիս ի հռչակաւոր եւ ի  
սուրբ ուխտիս» (էջմ. Թ. 601):

Կարժէ առանձին աշխատութիւն մը  
նուիրել Հայկական Կիլիկիոյ «գերահռչակ»

<sup>12</sup> Թորոս Աղբար, Բ., 433: Հմմտ. Սխուան,  
152—153:  
<sup>13</sup> Նարեկացոյ Աղօթամատոյց եւ Յիսուս Որդի,  
յամէ 1276 (ի Տարօն): Հմմտ. Սխուան 234 եւն:

վանքերու պատմութեան: Յուսով եմ, թէ Մեծ. Հ. Ն. Ոսկեան, որ կը զբաղի հայ վանական հաստատութեանց Պատմութեամբ, օր մը իր գննութեան նիւթ պիտի ընէ նաեւ այս վանքերը: Ես նկատի պիտի առնեմ հոս անոնցմէ մին միայն, Ակների կամ Ականց վանքը:

Ականց կամ Ակների վանքը հիմնարկուած է «ի լեոնային կողմանս» Հայկական Կիլիկիոյ, այն է «մերձ յաստուածապահ ամրոցն որ կոչի Անդրունին բերդ<sup>14</sup>», Յախուտ գաւառի մէջ, որ կը տարածուէր «սոս ստորոտով Բարձր բերդի», ըստ Հ. Ղ. Ալիշանի՝ նոյն բերդին հիւսիս-արեւելեան քղանցքին<sup>15</sup>: «Պատմութիւն ազգին Ռուբինեանց» գրուածքին հեղինակը կը գետեղէ Ակները առ եզր Պարատիս գետոյ<sup>16</sup>: Կիր. Գանձակեցւոյ համաձայն, հոն, ուր հիմնարկուած էր Ակների վանքը, «եզր էր տեղին այն», այսինքն կ'իշխար Հայկական Կիլիկիոյ սահմանաձայրը:

Ակների (Ակներոյ) կամ Ականց վանքը կոչուած է հաւանօրէն Ակներ գիւղէն, իսկ գիւղս իր անունն առած է այն ակնաղբիւրներէն, որոնք կը բղխէին այն կողմերը: Վանքս պատմութեան մէջ կը յիշուի 1215—1335 տարիներուն. Կիլիկիոյ ժամանակաշրջանը ժե. դարու կէսին «այժմ յաւուրս մեր, կ'ըսէ, ըստ անուան վանիցն՝ տեղին Ակներ կոչի, եւ վանացն յաւերակին՝ ազօրէն, այսինքն ջրաղացք. զի ոչ ոք կայ ի նմա ի վաղուց հետէ» (Սիսուան, 535):

<sup>14</sup> Կը յիշուի մէկ անգամ միայն 1332ին, հաւանօրէն նոր կառուցուած բերդերէն մին. իր անունն առած ըլլալու է Անդրուն գիւղէն, որ կը յիշուի նոյնպէս մէկ անգամ նոյն 1332 տարւոյն (Թ. 23բ). եւ ըլլալու է նոյն կնոթընդ վիճակին հետ, «մի ի կարգերոցն ի գաւառի Մարաշայ ըստ օսմանեան դիւանաց, որոյ եւ դիրք անձանօթ, բայց թուի մերձ ի Հաճին... բայց թերեւս եւ ի գետահովտի Ջահանայ, որում պատշաճի Մարաշ գաւառ, ուր եւ վտակ մի է համանուն» (այս ինքն՝ Անտրուն-սու գետ). Սիսուան 169բ. իսկ էջ 203բ կ'ըսուի. «սակաւուք հետի վտակ մի Անտրուն-սու կոչեցեալ՝ թափի ի Ջահան. եւ հուպ ի դուռն գաւառին երեւին աւերակք եկեղեցւոյ փորու եւ բերդի միոյ, զոր ի դէպ է կարծել Անդրունն հին, զոր ինտրեցար ի սահմանս Հաճանայ». համտ. նաեւ էջ 193բ:

<sup>15</sup> Սիսուան, էջ 153ա:  
<sup>16</sup> Գետս կը յիշէ նաեւ Սմբատ Մարտապետ, Տարեգիրք, էջ 91. Թորոս իշխան Կնդոսկաւի բերդը աննկով «զընակիչսն բերդին բնակեցոյց առ արին գետոյն Պատատիսոյ, որ այժմ Կրակա կոչի անունն տեղեացն», նոյնը ունի նաեւ Սամուէլ Անեցի (էջ 121). «... առ արին Պատատիս (երկու օր. Պատատիս) գետոյ, որ այժմ Ներքին Կրակայ կոչի»: Գետս Պլինիոսի Paradisusն է, ըստ Գիւլթրէի այժմեան Մէրքէնդէթ-սու (Hist. des Croisades, Document arm. I, 449 եւ 613), իսկ ըստ Ալիշանի, թէութեամբ, Մէլիկաւի գետն կամ անոր օճանդակը (Սիսուան, 12):

Վանքիս հիմնադիրն եղած է Լեւոն Ա. թագաւոր. Վահրամ Բարունի թուելով թագաւորին շինարարական գործերը կը գրէ<sup>17</sup>:

Ամրոց բազում եւ դղեակ շինեալ,  
Եւ գիլիկիա շրջապատեալ.  
Ականաւոր ուխտըն կազմեալ,  
Որ է Ակներ անուն ձայնեալ.  
Եւ զոր Նախնեացն էր պարգեւեալ  
Վանօրէիցն զոր շինեալ,  
Սա այնոցիկ առաւելեալ,  
Եւ մեծապէս առատացեալ:

Աւելի ճոխ կը գրէ այս մասին Կիրակոս Գանձակեցի (77). Լեւոն Ա. «Կարգէր վանորայս ընդ ամենայն կողմանս տէրութեան իւրոյ եւ բազմացուցանէր զպիտոյս նոցա, զի մի ումեք իւրք կարօտեցին՝ ըստ մարմնոյ բաւականին, այլ միայն ազօթից եւ պաշտաման պարագեացին. յորոց մի է ի վանօրէիցն, զոր կարգեաց նա, հոչականունն Ակներ կոչեցեալ վանք, որ մինչեւ ցարդ եւս վարին նովին կարգադրութեամբ, զոր նայն կարգեաց, զամենայն աւուրս շարաթու պահօք կատարել, այլ միայն լուծանել զշարաթ եւ զկիւրակէն ձկամբ կամ կթեղինօք»:

Նոյն պատմագիրը կը հաւաստէ, թէ Լեւոն Ա. «յոյժ սիրէր զայն վանքն վասն բարիք կարգաւորութեան նոցա եւ հաճոյական ազօթից». եւ իր փափագն էր, որ իր վերջին հանգստարանն ըլլայ նոյն վանքը: 1219ին, երբ ծանրապէս հիւանդացաւ թագաւորը, «հրամայէր հանել զինքն ի Սոյ եւ տանել ճանապարհաւ Ակներոյն, զոր ինքն էր շինեալ, զի յորժամ մեռցի, անդ տարեալ թագեացն զնա»: Հասնելով չուն Մրվանայ (Մաւրիա<sup>18</sup>) գիւղը, թագաւորն «սկսաւ զելիցն իւր ի կենցաղոյս հոգալ ըստ պատշաճի եւ զմարմինն հանգուցանել ի սուրբ ուխտն Ակներն»: Լեւոն կը վախճանի մայիս 2ին, նոյն գիւղին մէջ: «Եւ եղեւ հակառակութիւն, թէ ո՛ր հանգուցեան զմարմինն. զի կաթողիկոսն տէր Յոհան բնադատէր ի Թրաղարկ տանել, եւ իշխանքն՝ յԱկներն, ուր ինքն հրամայեաց»: Ի վերջոյ կը միաբանին, «զի հանցեն զիորոտին եւ տարցեն յԱկներն, եւ զմարմինն տարցեն ի Սիս եւ տապանաւ հանգուցեն յեկեղեցւոյ իւրում»: Այսպէս Կիլիկիոյ Պատմիչը<sup>18</sup>: Նոյն իմաստով կը պատմէ

<sup>17</sup> Պատմութիւն Ռուբինեանց, էջ 214:  
<sup>18</sup> Հայագրատու, Բ., էջ 440—441:

դէպքս նաեւ Կիրակոս Գանձակեցի. «կէսքն ասէին, թաղել զնա ի թագաւորանիստ քաղաքն ի Սիս, եւ այլք՝ ի վանքն որ կոչի Ակներ, զի յոյժ սիրէր նա զայն վանքն... իսկ ոմանք ոչ համարեցան պատշաճ, զի եզր էր տեղին այն եւ թշնամիք բազում էին նորայայտագեացն. Գուցէ, ասեն, եկեալ հանցին զնա եւ այրեցեն հրով, վասն բազում քիչունն, զոր ունէին ընդ նմա. ապա միաբանեալ ամենեցուն՝ տարեալ զմարմինն նորա թաղեցին ի Սիս. զսիրտն իւր եւ զիորն տարան ի վանքն Ակներ» (էջ 94):

Նաեւ Հեթում Ա. թագաւորի սրտին շատ մօտ էր վանքս. 1267ին, երբ թշնամին ասպատակեց Կիլիկիա եւ պարտուեցաւ հայ բանակը, պատերազմի դաշտի վրայ ինկաւ արքայորդիներէն մին (Թորոս), իսկ անդրանիկն Լեւոն գերի բռնուեցաւ, «բեկաւ, կը դրէ Գրիգոր Ակներցի<sup>19</sup>, սիրտն (որդեսէր թագաւորին Հեթում) ի կարի եւ յանձնարին սրտմութենէն... մինչ եկն ի սուրբ եւ ի զերահոչակ ուխտն միանձանց ի յԱկանց ասպատակ. եւ աստ միւթարեալ սակաւ մի ի միեղէն եղբարց սուրբ ուխտիս՝ կեցեալ աւուրս ինչ, մինչ ելաւ Թորոսն յերկրէս»: Ոչ շատ յետոյ վերադարձաւ թագաւորը նորէն Ակներ, ապրելու հոն իր վերջին օրերը: Կիլիկիոյ Պատմիչինն են տողերս. «Ի սոյն ամի (ՉԺԸ 1269) յամսեանն հոկտեմբերի, որ աւր իթ. էր, յերեքշաբթի, ի մտանել արեգական թագաւորն Հայոց Հեթում փոխեցաւ կանն թագաւորն Հայոց Հեթում փոխեցաւ ի կենցաղոյս եւ յաւելաւ առ հարս իւր առ ի կենցաղոյս եւ յաւելաւ առ հարս իւր կոչի ստորոտով Բարձրբերդոյ ի գեաւոյն որ կոչի Ակներ. եւ բարձեալ տարան զնա ի սուրբ ուխտն Թրաղարկ... որ եւ ի ժամ վախճանին բարիք խոստովանութեամբ կրանաւորեցաւ եւ անուանեցաւ Մակար», այս ինքն, ինչպէս պէտք է ենթադրել, գրուեցաւ միաբան Ակների վանքին: Ուրիշ հեղինակ մը կը պատմէ դէպքս. «Ի հասանել վախճանի թագաւորին Հեթումոյ առ եզր Պարատիս գետոյ, զաւուրսն Հեթումոյ առ եզր Պարատիս գետոյ, որ կոչի Ակներ, նախ կրօնաւորեցաւ եւ կոչուեցաւ անունն նորա Մակար, եւ ապա հանգեցաւ անունն նորա Մակար, եւ ապա հանգեցաւ թագաւորն իր կցորդներով չբնակեցաւ Ակների վանքին մէջ, այլ Ակներ գիւղի մէջ ունէր իր ապարանքը:

<sup>19</sup> Պատմութիւն Թաթարաց, էջ 40 (55):  
<sup>20</sup> Պատմութիւն ազգին Ռուբինեանց, հրատ. Սասնէլ Անեցւոյ Յաւելուածին մէջ, էջ 211:

Եթէ Ակների Եկեղեցին չարժանացաւ իր դամբանարանին մէջ ամփոփել թագաւորներ, բայց եղաւ այն արքայազններու դամբանարան. «Ի թուականիս 219 (1284), ի ժամ սորին գրութեան, կը գրէ յիշատակագիր մը, փոխեցաւ առ Գրիստոս բարեպաշտ իշխանաց իշխանն, արքայեղբայրն Հայոց եւ տեառնս, վասակ տէր Ճանճոյն, ի մարտի ամսոյ ԺԳ. յաւուր երկշաբթոյ, ընդ երեկս աւուրն, ի մայրաքաղաքին Սիս եւ թաղեցաւ ի սուրբ ուխտն Ակներ. որոյ ողորմեցի Տէր Յիսուս Գրիստոս. ամէն<sup>21</sup>»: Հոս թաղուեցաւ նաեւ Պաղտին մարաշախտ եւ իշխանաց իշխան, որ վախճանած էր Հալէպի բանտին մէջ (Սիսուան, 154) 1336ին:

Արդէն 1215ին կը նկատուի վանքս «զեւրահոչակ անապատ որ կոչի Ակներ» կամ «Ականց անապատ» (Թ. 1. համտ. նաեւ Թ. 13) եւ «մեծ եւ հոչակաւոր անապատ որ կոչի Ակներոյ վանք» (Թ. 1բ, նաեւ 3). «Հոյակապ եւ ակնաւոր մենաստան» (Թ. 14), «վանք գերահոչակ» (Թ. 15/16), «հոչակաւոր մենաստան Ակներոյ վանք» (Թ. 12), «աստուածարնակ եւ հոչակաւոր ուխտ Ակներ կոչեցեալ» (Թ. 18), «հրեշտակարնակ ուխտ Ակներոյ» (Թ. 19) եւ այլն:

Վանքիս լեոնաչէն եկեղեցին է յանուն «Ս. Աստուածածնի» կամ «Տիրամօր»: Կը յիշուին հոն նաեւ Ս. Առաքելոց եկեղեցի, «ընդ հովանեաւ Ս. Աստուածածնիս եւ սուրբ Առաքելոցս» (Թ. 1, 1բ, 15). Ս. Յակոբայ եկեղեցի, «ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին եւ սուրբ Յակոբայ» (Թ. 16). Ս. Նշանի «ընդ հովանեաւ սուրբ Նշանիս եւ սուրբ Յակոբայ» (Թ. 11), «ընդ հովանեաւ սուրբ Տիրամօրն եւ Ս. Յակոբայ եւ այլ ամենայն սրբոց» (Թ. 17). Ս. Փրկիչ, «ընդ հովանեաւ սուրբ Փրկչիս եւ սրբոյ Աստուածածնիս» (Թ. 3):

Եկեղեցիս ունէր Ս. Խաչի եւ Սրբոյ Նշարաց մասունքներ, «ընդ հովանեաւ... աստուածընկալ Նշանացս» (Թ. 2), «եւ այլ բազմահաւք սրբոցս» (Թ. 3), «աստուածընկալ Նշանացն եւ այլ բազմահոյլ նշարացն սրբոց» (Թ. 13), «եւ կենսաբեր սուրբ Նշանացն եւ նահատակացն որ աստ կան» (Թ. 12) եւ այլն:

<sup>21</sup> Էջմ. Թ. 195, Թղ. 118բ: Հրատ. Արարատ, 1898, էջ 210:

Ակները վանքը իր ներքին կանոնադրու-  
թեամբը խստակեաց վանքերէն էր: Կիրակոս  
Գանձակեցոյ համաձայն վանքին սահմանա-  
դրութիւնն տուած է ինքնին Լեւոն Ա. թա-  
գաւոր. «որ մինչեւ ցարդ եւս վարին նովին  
կարգադրութեամբ, զոր նայն կարգեաց, զա-  
մենայն աւուրս շարաթու պահօք կատարեալ,  
այլ միայն լուծանել զշաբաթ եւ զկիրակէն  
ձկամբ կամ կթեղինօք» եւ «աղօթից եւ պաշ-  
տաման պարապել»<sup>22</sup>, Դաւիթ Բջնեցի, որ  
լսելով «զհամբաւ բարեաց եւ սուրբ կրօնք  
եւ կանոնք այս մենաստանիս» եւ այցելած է  
հոն, 1261ին կը յայտնէ իր հիացմունքը ա-  
կանատեսի գրչով. «Ամենեքեան, կ'ըսէ,  
իբրեւ զհրեշտակ Աստուծոյ արթուն եւ  
զուարթուն յօրհնաբանութիւնս Աստուծոյ ի  
տուէ եւ ի գիշերի անդրազ եւ անհանգիստ»  
(Թ. 3):

Արդէն 1215ին ունէր վանքս իր յարկին  
տակ ոչ միայն հանգուցեալներ, այլ եւ ծե-  
րունի եւ երիտասարդ միաբաններ: Յիշատա-  
կազիր մը այս տարւոյն կը խնդրէ յիշել  
«զՀայր Թորոս եւ զմիաբանեալ եղբարսն իւր  
զմեծամեծս եւ զփոքունս, զյառաջացեալսն  
առ Քրիստոս եւ որ այժմ են» (Թ. 1). ուստի  
կրնանք ենթադրել թէ թուականէս գոնէ երկ-  
տասնեակ տարի յառաջ ըլլալու է անոր հիմ-  
նարկութիւնը: Նոյն իմաստով կը գրէ ուրիշ  
մը՝ Գրիգոր Ակներցի 1273ին. «Տէր Աստուած  
ողորմեցցի ամենայն գործաւորաց եւ սպա-  
սաւորաց սրբոյ ուխտիս՝ առաջնոցն եւ միջ-  
նոցն, այլ եւ վերջնոցն որ գալոցն են զկնի  
մեր» (Թ. 8): Այդ «գործաւորաց եւ սպասա-  
ւորաց» թուին մէջ կը յիշէ Դաւիթ Բջնեցի  
«գտնուես եւ զմարնպան եւ զհացպան եւ  
զփոնպան եւ զամենայն աշխատողս» (Թ. 3):

Վանքին գլուխը կը կոչուէր «Հայր» կամ  
«Առաջնորդ» կամ «Վերակացու»: Անոր իշ-  
խանութիւնը ժամանակաւոր էր, այսինքն կը  
տեւէր որոշ տարիներ (իբր 6 տարի), որմէ  
ետքը կը կատարուէր նոր ընտրութիւն: Կը  
յիշուին հետեւեալ վանահարք.

- 1. Թորոս (Թ. 1) 1215
- 2. Գրիգոր 1261
- 3. Ստեփանոս (Թ. 7) 1273

<sup>22</sup> Կիր. Գանձակեցի, էջ 77. բնագիրն ուղղած էմ  
համաձայն Վիեննայի Թ. 574 ընտիր ձեռագրին:

- 4. Սարգիս, ներկայ Սոյ ժողո-  
վին<sup>23</sup> 1307
- 5. Գրիգոր (Թ. 10—11) 1312—15
- 6. Ստեփանոս (Թ. 15—16) 1325
- 7. Մխիթար (Թ. 20) 1332
- 8. Յովհաննէս, ներկայ Մխիթար  
կաթողիկոսի ժողովին<sup>24</sup> 1342

Կարեւոր պաշտօն էր փակակալութիւնն  
կամ Եկեղեցականութիւնը. փակակալն ունէր  
իր հսկողութեան տակ նաեւ Եկեղեցոյ Մա-  
տենադարանը: Կը յիշուին հետեւեալները.

- 1. Սիմէոն (Թ. 3) 1261
- 2. Վարդան (Թ. 7—8) 1273
- 3. Գրիգոր (Թ. 12) 1315
- 4. Ստեփանոս (Թ. 16—20) 1325—32
- 5. Վարդան (Թ. 23) 1335
- 6. Յովհաննէս «փակակալ եւ երաժիշտ»<sup>25</sup>:

Կ'երեւայ թէ Ակներ ունեցած է նաեւ իր  
եպիսկոպոսները, թերեւս իբրեւ թեմակալ  
Յախուտի թեմին: Ինձ ծանօթ են երկու  
եպիսկոպոս միայն՝

- Տէր Բարսեղ (Թ. 3) 1261
- Տէր Վարդան 1307—1332

Գրիգոր Անաւարդեցի կաթողիկոս իր  
1306ին կը գրէր իր թղթին մէջ առ Հե-  
թում Բ. թագաւոր, որ խորհուրդի կանչէ  
«զեպիսկոպոսներն եւ զխորագէտս»<sup>26</sup> եւ  
զԱկներոյն հայրերն, որ տանին ցուցանեն  
զայս գիրքս յիւրեանց վանքն՝ պարկեշտ,  
կատարեալ եւ խելօք մարդկան<sup>27</sup>: Ականա-  
ւոր հանդիսացան Ակների վանքին մէջ Վար-  
դան վարդապետ, որ յետոյ եպիսկոպոս ալ  
եղաւ, եւ իբրեւ այսպիսի ներկայ էր Սիսի  
1307ի ժողովին<sup>23</sup>: Իր գովութիւնը կը հիւ-  
սեն ժամանակակիցները. կը խնդրուի յիշել  
«զՎարդան վարդապետն սքանչելի վարուք  
ի մէջ եկեղեցոյ» (Թ. 3 յամէ 1261). «Սուրբ  
ուխտիս Ակներոյ զծերունի սուրբ վարդա-  
պետն զտէր Վարդան» (Թ. 15—16 յամէ 1325.  
Թ. 19—20) «զժուժկալ եւ զփոյթն յաստուա-  
ծային բանից զերջանիկ ծերունի սուրբ վար-  
դապետն զտէր Վարդան, զյորդորդն մեր ի  
զրել գրոց աղաչեմ յիշել ի Տէր» (Թ. 20  
յամէ 1332): Հաւանօրէն սա է նաեւ «Վար-

<sup>23</sup> Հ. Ա. Պալճեան, Պատմութիւն կաթողիկէ  
վարդապետութեան ի Հայս, էջ 275, 281:  
<sup>24</sup> Պալճեան, 274:  
<sup>25</sup> Սիսուան, 517:  
<sup>26</sup> Կարդալ «զՍորագետոյ», այսինքն Սորնի Ձորի  
վանքերու Հայրերը:  
<sup>27</sup> Կղեմէս Գալանոս, Միաբանութիւն Հայոց սուրբ  
Եկեղեցոյ... Հոտմ 1650, Մասն Ա., էջ 448:

դան նուաստ եւ տրուալ վարդապետ, որ  
զգիրս (Աւետարան) գրեցի» Յովհաննէս քա-  
հանայի համար (Թ. 13 յամէ 1323): Ինձ կը  
թուի թէ ա'յս Վարդան կ'ակնարկուի նաեւ  
1288ին ի Կիլիկիա (Միս կամ Ակներ) գրուած  
ձեռագրի մը մէջ, որմէ արտագրութիւն մ'է  
Միւնխէնի Թ. 6 յամէ 1432 (Գալէմբեա-  
րեան, Յուլյակ, էջ 19): Գրիգն Թորոս երէց  
օրինակած էր ի խնդրոյ Սարգիս Շալուէ ա-  
րեւելցի վարդապետի<sup>28</sup>. ոտանաւոր յիշա-  
տակարանին մէջ կը խնդրէ յիշել.

Ընդ որս մեծ ուարին Վարդան կոչեցեալ,  
Այն երջանիկն աստուածընկալ,  
Որ ի մարմնի հրեշտակացեալ,  
Եւ աշխարհի քարոզ եղեալ:

Վարդանս, որ դործած է յԱկներ, չէ՞  
թողուցած որ եւ է գրական աշխատութիւն:  
Այլուր (Հանդ. Ամս. 1946, էջ 95—109), երբ  
կը խօսէի Վարդան Բարձրբերդցի-Կիլիկեցի  
վարդապետի մասին, խօսք ըրած էի նաեւ  
շարականազիր Վարդանի մը նկատմամբ, որ  
ծաղկած էր ԺԳ. դարու վերջին տասնեակին  
(անդ, էջ 106—109): Այժմ խնդր կրնայ  
ըլլալ, թէ այս շարականազիր Վարդան հնա-  
րաւոր չէ՞ արդեօք նոյնացնել Ակներցի Վար-  
դանի հետ: Աւելին ըսել կը թողում ապա-  
գային: Ուշադիր կ'ընեմ միայն, որ նաեւ  
«Տէր Բարսեղ», որ կը յիշուէր յԱկներ, որ  
նոյն է անշուշտ համանուն արքայազոր հետ,  
նոյնպէս շարականազիր էր. իր մասին պիտի  
խօսիմ ուրիշ առիթով մը:

Իրեն ժամանակակից է ուրիշ Վարդան  
քահանայ մ'ալ յԱկներ, որ հաւանօրէն նոյն  
է «արեամբ նահատակ» Վարդան քահանայի  
հետ: Այս Վարդան կը յիշուի առաջին ան-  
գամ 1273ին իբրեւ փակակալ (Թ. 7—8).  
1324ին իբրեւ գրիչ Աւետարանի (Թ. 14),  
ուր եւ կը յիշուի իր քուերորդին Ներսէս  
քահանայ: Ինձ ծանօթ է ԺԳ. դարէն Ներսէս  
գրիչ մը, որ «Վարդան բանի սպասաւորը»  
համար կ'օրինակէ Փիլոնի գրութիւնները  
(Թ. 10 դ): Կը յիշուի Վարդան քահանայ  
մ'ալ 1329ին, որ հօրեղբայրն է Կարապետ  
գրչի (Թ. 18). բայց սա ուրիշ մ'ըլլալու է:

<sup>28</sup> Սարգիս Շալուէ 1288ին «արեւելցի եկաք,  
կ'ըսէ, յաստուածակոխ քաղաքն Երուսաղէմ» եւ Ս.  
Յակոբի գաւիթը սալեցի եւ Հրեշտակապետի վանքը  
զարկապետի Լեւոն թագաւորի եւ Յակոբ կաթողիկոսի  
ձախքով (Տէր-Յովհաննէսեան, Պատմ. Երուսաղէմի,  
Ա., էջ 189—190): 1287ին ի Սիս օրինակել կու տայ  
Սաղմոսի գրքերը (Լալայեանց, Յուլյակ Վասպուր.,  
էջ 56—58):

Նկատմամբ Վարդան արեամբ նահատակ քա-  
հանայի ծանօթ են ինձ հետեւեալ վկայու-  
թիւնները 1329էն, որոնք ենթադրել կու տան  
թէ նա միաբան էր Ակների եւ հմուտ բանա-  
սէր մը. «Աղաչեմ յիշել ի Տէր գարեամբ նա-  
հատակեալ քահանայ Վարդան, որ գաւրի-  
նակն էր գրեալ, այս ինքն Աւետարան մը  
կ'օրինակէ, զոր ուղղած էր «Գէորդ Լամ-  
բրոնացի» (Թ. 17): «Եւ յիշման արժանին  
յսուրբ քահանայն գարեամբ նահատակն  
զՎարդան, որ բազում տառապանօք էր գրեալ  
զօրինակս, երիս օրինակս մերձ ունելով եւ  
մեզ դիւր ճանապարհ էր կազմեալ» (Թ. 18).  
խօսքը Յովհաննէս Ոսկերեւանի Մատթէի  
Մեկնութեան մասին է, որուն բնագիրը Վար-  
դան համեմատութեամբ երեք ձեռագիրներու  
փերակազմած է: «Ողորմութիւն օրինակիս  
զրողին Վարդանայ... քահանայի եւ արեամբ  
վկայի. այլ եւ Պետրոսին որ յօժար կամօք  
ես որ գրեցի»: Գրիգն է Հայրապետ, որ կա-  
տարած է իր օրինակութիւնը 1329ին «յա-  
նապատս Փոս վերակոչեալ յաշխարհիս Կիլի-  
կեցոց»: Գրիգն, որ օրինակած է Յովհան-  
նէս Մինայեցոյ Սանդուխք գրութիւնը, յա-  
ռաջ բերած է Գլխացանկէն յառաջ առաջին  
գրչին Վարդանի տողերս. «Այս բանք գովու-  
թեան ճառիցս թուի թէ չէ միաբան ճառից-  
այլ եւ զհամարն ի վերայ առաջնոց ճառու-  
ցոյցին եղի, զի յօրինակն անհամար էր եւ  
ստոյգ երեւ մինչ ի վերջն». Հայրապետ գրիչ  
իրմէ կ'աւելցնէ. «Չայս Վարդանն էր գրել՝  
լաւ հասու եղեալն»<sup>29</sup>: Ակների մէջ մեզի  
ծանօթ է 1315ին Պետրոս սարկաւազ եւ 1329ին  
Պետրոս քահանայ: Անհնարին չէ, որ սար-  
կաւազս նոյն ըլլայ քահանային եւ իր կար-  
գին Հայրապետ գրչի յիշած Պետրոսին հետ.  
ուստի գաղափար օրինակն Փոսի վանքը տա-  
րուած ըլլալու է Ակներէն:

Վանքիս միաբան եղած է նաեւ Յովհան-  
նէս Արքայեղբայր եւ արքեպիսկոպոս Գոնեբի,  
որուն համար կ'ըսուի թէ Աւետարան մը  
գրուած է «ձեռամբ Յովհաննէս եպիսկոպոսի  
... ի սուրբ ուխտն Ակներ, ուր յովով ամօք  
նախ՝ նոցին միաբան էր գրեալ եւ յովով ար-  
գիւնք անդ արարեալ» (Թ. 6): Յովհաննէս  
գրասէր էր եւ բանասէր, նաեւ յաջող բա-  
նաստեղծ, արժանաւոր միաբան մը Ակների  
վանքին:

<sup>29</sup> Յ. Թօփճեան, Յուլյակ հայ. ձեռագրաց Դա-  
ղեան Պաշիկ վարդապետի, Ա., էջ 86. հմտ. Հանդ.  
Ամս., 1947, էջ 260—261:

Գրասէր Հանդիսացան Հոն նաեւ Ստեփանոս եւ Գրիգոր վանահայրերը. որոնց օրով (1270—1330) ծաղկեցաւ գրչութեան արուեստը յԱկներ անհամեմատ կերպով: Անոնք ջանք տարին կազմել Վանքին մէջ ընտիր գրադարան մը, օրինակելով եւ օրինակել տալով հայրագիտական, պատմական եւ ոգեշահ գործեր: Գրիգոր անուանի եղաւ նաեւ իբրեւ պատմագիր, իր մասին պիտի խօսիմ առանձին յօդուածով մը:

Գրչակեր:

Ակներէ մէջ ծաղկեցան բազմաթիւ գրիչներ. կը յիշեմ՝

1. Պետրոս եղբայր Սիմէոնի 1215 (Թ. 1):
2. Դաւիթ Բջնեցի 1261 (Թ. 3):
3. Անանուն գրիչ 1267 (Թ. 4):
4. Բարսեղ 1269 (Թ. 5):
5. Յովհաննէս Արքայեղբայր 1269:
6. Ղազար եղբայր Աւետիքի 1273 (7):
7. Գրիգոր Ակներցի 1273 (Թ. 8), 1312 (Թ. 10), 1329 (Թ. 19):
8. Գրիգոր որդի Վահրամայ 1325 (Թ. 15, 16), 1331 (Թ. 20բ), 1332 (Թ. 20):
9. Գրիգոր Բ. Ակներցի 1335 (Թ. 24), 1386 (Թ. 25):
10. Ներսէս Կլայցի, եղբայր Յովհաննէսի 1312 (Թ. 10), 1313 (Թ. 11):
11. Յովհաննէս 1313—1315 (Թ. 10, 12):
12. Վարդան վարդապետ եղբ. Բարսղի 1323 (Թ. 13բ):
13. Վարդան ք. (Նահատակ) 1324 (Թ. 14):
14. Սերովբէ որդի Ներսիսի 1326 (Թ. 17), 1334 (Թ. 22):
15. Կարապետ եղբորորդի Վարդան քահանայի 1329 (Թ. 18):
16. Մինաս 1322 (Թ. 13ա):

Մանրակարիչներ:

1. Պաւղոս 1267 (Թ. 4):
2. Գրիգոր դպիր 1312 (Թ. 10):
3. Գրիգոր նորընծայ քահանայ 1315 (Թ. 12):
4. Կարապետ քահանայ 1329 (Թ. 19):
5. Դաւիթ (Բջնեցի) 1334 (Թ. 22):

Կազմողներ:

1. Ռուբէն 1215 (Թ. 1):
2. Մանուէլ 1273 (Թ. 7):
3. Յակոբ Մեծպարոնենց 1312 (Թ. 16):
4. Բարսեղ ք. 1325 (Թ. 16):
5. Կարապետ գրիչ 1329 (Թ. 18):

Կը հրատարակեմ այս տեղ այն բոլոր Յիշատակարանները, որոնք գրուած են Ակներէ եւ Չորոյ Ս. Թորոսի վանքերու մէջ:

1ա. «Յամի վեցհարիւրորդի վաթսնորորդի չորրորդի թուականութեանս Հայոց (1215) գրեցաւ դիրքս Յաճախապատում լուսաւոր վարդապետութիւն եւ խրատք ոգեշահ, ազգի ազգի բժշկարանք ախտացելոց հոգով, ասացեալ սուրբ եւ երջանիկ Լուսաւորչին Հայոց Գրիգորի, ընդ<sup>30</sup> նմին եւ ուղղափառ վարդապետութիւն ընդդէմ հերձուածողաց ազգի ազգի աւրինաւք վկայութեամբ սուրբ գրոց սրբոյն Սեբերիանոսի ուղղափառ վարդապետի ասացեալ յազուտ եւ ի շահ ուղղադաւան եկեղեցւոյ եւ ի կործանումն եւ յամաւթ չարափառ հերձուածողաց: Ի գերահռչակ անապատս որ կոչի Ակներ, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս եւ սուրբ Առաքելոցս. հրամանաւ երիցս երանեալ հաւրն Թորոսոյ եւ այլ միակամ եւ միախորհուրդ եղբայրութեանս ձեռամբ Պետրոսի փցուն եւ անպիտան գրչի: Ի թագաւորութեանն Հայոց Լեւոնի յաղթողի եւ բարեպաշտի. եւ ի հայրապետութեանն տեսուն Յոհաննիսի Հայոց կաթողիկոսի:

Արդ որք ազատիք ի սմանէ՝ յիշեսցիք աղաւթիւք զհայրն Թորոս եւ զմիաբանեալ եղբարսն իւր, զմեծամեծս եւ զփոքունս, զյառաջեալսն առ Քրիստոս եւ որ այժմ են եւ որ զկնի մեր գալոց են. զի զամենեանս արժանաւորս արասցէ խոստացելոց բարութեանցն, զոր ակն ոչ ետես եւ ունին ոչ լուաւ: Յիշեսցիք եւ զանպիտան անձն Պետրոսի գրչի եւ զհարազատ եղբայրն իմ զՍիմեոն եւ զճնողսն մեր զհոգեւոր եւ մարմնաւոր...:

Մեղապարտ անձն Ընդհանր կազմողի սորա աղաչէ զձեզ, ով սուրբ եղբարք, ասե՛լ ցաւակցութեամբ, թէ Աստուած ջնջեա զյանցանս Ընդհանր եւ զճնողաց իւրոց. եւ Աստուած զձերն ջնջէ. եւ նմա փառք յաւիտեանս» (Թղ. 161ա):

բ. «Չսուրբ եւ զպատուական եւ զատուածահաճոց հայրն զԹորոս զԱկանց անապատին առաջնորդն յիշեսցիք ի Քրիստոս, որք կարգայք կամ ընդաւրինակէք, եւ զճնաւոս նորա. եւ որ յիշէ յիշեալ եղիցի» (Թղ. 160բ):

գ. «Ի թուին ՈԿԼ (1219) մեռաւ թագաւորն Հայոց Լեւոն, որում ողորմեցիք Քրիստոսի»

<sup>30</sup> Մինչեւ այս տեղ լուսատիւ հրտ. Յովսէփեան:

տոս Աստուած եւ սուրբ թագաւորացն պատկառեց արասցէ:

Եւ յայսմ ամի տապալեցին անիծեալ Տաճիկքն զերուսաղէմ ի հիմանց, զբովանդակ եկեղեցիսն. եւ զպարիսպն շուրջանակի եւ զամենայն շինութիւն քաղաքին: Ճշմարտապէս աստ կատարեցաւ ասացեալն ի Տեառնէ, թէ Ոչ մնացէ այդք քար ի քարի վերա, որ ոչ քակտեսցի: Այլ յառաջիկայն Աստուծոյ է գիտելի» (Թղ. 161բ):

Էջմիածին, Թ. 947 (Ճառք Սեբերիանոսի. Յաճախապատումն անջատուած է. տե՛ս յաջորդ Յիշատակարանը): Սկիզբէն մաս մը լուսատիւ հրատարակած է Գարեգին Եպ. Յովսէփեան, Քարտէղ հայ հնագրութեան, տախտակ ԽԷ. հմմտ. նաեւ էջ 33: Մասամբ հրատարակուած՝ Հ. Գ. Չարբանանեան, Մատենադարան հայ. թարգմանութեանց, էջ 688. հմմտ. նաեւ Սիսուան, էջ 154 (1, բ յիշատակագրութիւնը):

2. Փառք...: Կատարեցաւ լուսաւոր վարդապետութիւնս սրբոյն Գրիգորի Հայոց Լուսաւորչի, գիրք որ կոչի Յաճախապատում, ի թուականութեանս Հայոց ՈԿԻ (1215), ի հայրապետութեան տեսուն Յոհաննիսի Հայոց կաթողիկոսի եւ ի թագաւորութեան աստուածասէր եւ բարեպաշտի Լեւոնի: Գրեցաւ հրամանաւ հաւր Թորոսի եւ յաւթարութեամբ ամենայն եղբայրութեանս ի մեծ եւ ի հռչակաւոր անապատիս, որ կոչի Ակներոյ վանք, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս եւ սուրբ Առաքելոցս եւ աստուածընկալ Նշանացս: Արդ... յիշելոյ արժանի արարէք զմեղապարտ... զբողոքողսն եւ զճնողսն իմ...: Գարձեալ աղաչեմ զընթերցողս՝ սխալանաց եւ խոչորութեան եւ անյարմար գրելոյս չլինել մեղադիր, քանզի ակամար էի եւ այլ ոչ էի արարել. եւ յայս վասն ստուգարանութեան աւրինակին համարձակեցա...:

Ողորմեցի Քրիստոս Աստուած Կիրակոսի... որ աշխատեցաւ ի սմա...»:

Երուսաղէմ, Թ. 94 (Յաճախապատում. հմմտ. Արտաւաղը Արքեպ. Սիւրմէեան, Յուլիոս հայ. ձեռագրաց Երուսաղէմի): Չեռաղերս նախնարար Ա. մասը կը կազմէր էջմիածնի Թ. 947 ձեռագրին (տե՛ս նախորդ Թ. 1 Յիշատակարանը):

3. Յետագայ Յիշատակարանը, որ բառակապ սկզբնագրերով անատուած է, պատուաւոր է սկզբէն, ինկած են «ԶԴԱԽԻՓ Գր»(իչ) տուները. այժմ կը սկսի.

«Իսկ յետ բազում ժամանակաց...»

Չարչարեալ տասն զանազան տնջանաւք (Գր. Լուսաւորիչ), որ եւ զայս նամակս շարագրեաց մեծահաճար քարտուղարն Ագաթանգեղոս ի սկզբան(է) մինչեւ ցկատարումն:

Յայս իսկ ||| (անմխի)թար եղեալ ի բազմաշահ մեծազին զանձուցս սուրբ եղբարց մեծ եւ հռչակաւոր անապատիս Ակներ կոչեցեալ. զի ունելով այլ (իմացիք՝ զայս) գիրս դժուարընթեռնի, զի ոչ ախորժէին ընթեռնուլ ի ժամատեղ կամ ի սեղան համարձակ:

Իսկ կամակից եղեալ առաջնորդք ուխտիս փոխե[ա]լ զսա յայլ գիր, որով եւ իմ յանձն առեալ զհրամայ(յ)եալս ի պատուական հարց եւ եղբարցս գրել զսա:

(Շնորհ)աւք ամենակալ(ին) կատարեցի ըստ կարողութեան (իմոյ) ոչ եթէ գիտէի զարուեստ գրչութեան յանդգնեցաք ի գործս, այլ ըստ յուսոյ որ ի սուրբ յուխտս եւ ըստ հրամանի պատուական եղբարցս, որպէս եւ գրեալ է, թէ Կեանք է լսողութիւն:

Եւ արդ աղաչեմ եւ մաղթեմ զձեզ, ո՞վ ամենամաքուր եւ հոգիապայծառ սուրբ զասք քահանայից եւ միայնակեցաց, որք հանդիպէք այսմ տառի կամ ընթերցմամբ կամ գաղափար առնելով, յիշել առ Քրիստոս զպատուական հայրն զԳրիգոր մաքրակրօն քահանայ եւ զտէր Բարսեղ եւ զՎարդան վարդապետ սքանչելի վարուք ի մէջ եկեղեցւոյ, եւ զփակակալ Սիմեոն եւ զՀայրապետ ամենայնի(ւ) սրբասէր եւ աստուածահաճոյք, նաեւ զհոգեւոր եղբայրս իմ զՆերսէս եւ Յոհաննէս յոյժ պիտանի եւ աւկտակար ի գործս բարիս. եւ զայլ ամենայն եղբայրութիւնս, որ ոչ էր կար մի ըստ միովէ անուանել: Աղաչեմ յիշել եւ զԹորոս միակեաց եւ զԳրիգոր, որ աշխատեցաւ ի կոկ թղթիս. նաեւ զտնտես եւ զգմարմպան եւ զհացպան եւ զփոռպան եւ զամենայն աշխատողս առ Քրիստոս յիշել, զսուրբ ձերուհիք զՍարգիս եւ զԿարապետ ||| (եւ զԵփր)եմ:

Յուցից եւ...:

Է եւ ինձ պատմել, զի գովով իմ ի նահանգէն յարեւելից, յԱյրարատեան գաւառէն, ի դղեակէն Բջնոյ. եւ իմ խոցեալ չար վիրաւք հոգովս զանազան մեղաւք. ապա այնուհետեւ որպէս զչար վիրաւք հարեալ մարդ ի ինդիր ելեալ բժշկի եւ ոչ ուրեք

4\*

դտեալ այլ միայն դէմ եղեալ զնալ ի սուրբ քաղաքն Երուսաղէմ եւ ի Հոռոմ ի Պատկերն անձեռագործ եւ սուրբ Պետրոս եւ Պաւղոս, նաեւ յԱստուածածին որ ի ծագս տիեզերաց եւ ի սուրբ առաքեալն Յակոբ:

Գանդի ոչ եթէ վասն պանծանաց զրեմ զայս, այլ վասն մեծ մեղաց իմոց, որ անհուն է եւ անչափ է:

Իսկ դարձեալ <լուեալ> զհամբաւ բարեաց եւ սուրբ կրանք եւ կանոնք այս Մենաստանիս եւ յոյժ ցանկացայ. եւ եկեալ եմ յուսով մեծաւ եւ աշխատութեամբ յոյժ եւ տուայ (տանաւք):

Տեսեալ զիս աւտար եւ պանդուխտ՝ ողբսէր եղբարցս եւ զթացին յիս իբրեւ զծնաւդ եւ ցուցին ինձ սէր իբրեւ զՏէր Յիսուս, զոր հատուցէ Բրիստոս սոցա ըստ իմ..... (Կ)եանս տացէ հանգիստն յաւիտենից ընդ սուրբս իւր. եւ ոչ միայն զայս, այլ եւս առաւել ցուցին յիս զթուփին:

Եւ ես ոչ ունելով զձեւ սոցա եւ զկարգ, զի ամենեքեան իբրեւ զհրեշտակ Աստուծոյ արթուն եւ զուարթուն յաւրճնարանութիւնս Աստուծոյ ի տուէ եւ ի գիշերի անդբաղ եւ անհանգիստ. եւ զայս տեսանելով իմ, վա՛յ եւ եղուկ ասելով անձին իմոյ, զի թափուր զոլով ի կրանից սոցա եւ յառաքինութենէ:

Բամեալ զիս այնուհետեւ զմտաւ ամի զգործս զայս, թերեւս լինիմ կցորդ բարեաց սոցա. ուրեմն եւ որդորելով զիս եւ խրախուսելով սուրբ հարցոյ որ ի վերոյ գրեցաք: ... աղաչեմ զսրբութիւնդ ձեր անմեղազիր լինել սխալանացս եւ սիրով ուղղել. զի այս էր կարողութիւն իմ. այլ եւ ի ստոյգ աւրինակէ գրեցի եւ ըստ չափու զգրադարձ ||| (թուղթ ինկած) (թղ. 366ա—367բ):

Բ. Ով համագումար դասք սրբազանից, յորժամ ընթեռնոյք կամ լսէք. յիշեցէք ի Բրիստոս զորդորիչ գործոյս զՀայրապետն եւ զՍիմեոն փակակալ եւ զանմաքուր զծողս... (թղ. 48ա):

Գ. Չամենամեղս... զգրիչ Դաւիթ յիշել, աղաչեմ... եւ զծնողսն մեր եւ զամենայն եղբայր... (թղ. 247ա):

Դ. Ողորմութեամբն Աստուծոյ սկսայ ի յամսեանն զէկտեմբեր ժԵ. եւ շնորհաւք սուրբ Հոգւոյն կատարեցի ի մարտ Լ... (թղ. 325ա): Կողքին այլ ձեռքէ խոչոր բորգիր. «Ի թվիս Հայոց ՉԺ» (1261):

Էջմիածին, Թ. 1656 (Կար. 1614. Ագաթանգեղոս): Հրտ. Ստ. Կանայեանց. Zeit-

schrift für armenische Philologie 2 (1904), 298—303 (յատկապէս 300—302): Ագաթանգեղոս, Թիֆլիս-Վաղարշապատ, 1909, էջ 110—119:

4. Փառք...: Արգ աղաչեմ զձեզ... յիշել... զիմ անարժանութիւնս սրտի մտաւք եւ զայնոսիկ որ քաջալերիչ եւ յորդորիչ եղին մեզ ի սոյն զիւր, զհոգեւոր եղբայր մեր զԴաւիթ եւ զՊաւղոս, որ զխորան(սն գլ)խոցս նկարեաց կարմրաղեղով. նաեւ զծնողս մեր եւ զսնուցողս մեր...: Գրեցաւ սուրբ աւետարանս յԱկանց անապատիս, ընդ հովանեաւ սուրբ Փրկչիս եւ սրբոյ Աստուածածնիս եւ այլ բազմահաւք սրբոցս. ի հայրապետութեան տեան Կոստանդեա եւ ի թագաւորութեանն Հեթմոյ. ի թուականութեանս Հայոց ՉԺԶ»: (Շարունակութիւնը տես վարբ. էջ 269—270):

Բ. Փառք...: Գրեցաւ ի թուիս ի ՉԺԶ (1267), յանապատիս Ականց կոչեցեալ, ընդ հովանեաւ սուրբ Փրկչիս եւ սուրբ Աստուածածնիս... ի զաւտիս Յախուտ: Յայս նշանաւոր ամիս աւարեցաւ աշխարհս Կիւլիկեացոց յանաւրէն Իամայէլացոց եւ ի բազում սուրբ եւ տրտմութեան են աղբ քրիստոնէից...: Ողորմեցի Բրիստոս Աստուած հոգեւոր եղբար մերոյ Դաւիթ, որ աւժանդակ եւ քաջալերիչ եղեւ մեզ... (թղ. 239ա):

Գ. «Յուրտ է, ձեռս կաղուել է. գէշ կուրբուկ. թողութիւն արա աղաչեմ» (թղ. 155ա): «Անհեթեթ կուրբուկ. ցուրտ է ձեռս կաղուել է. թողութիւն արա, աղաչեմ» (թղ. 161ա):

Նոր Զուղայ, Թ. 51 Ամենախրկչի վասնաց (Նոր Կտակարան եւ Մարգարէութիւնք Եսայեայ եւ Եզեկիէլի. Ս. Տէր-Աւետիսեան, Յուրցակ հայ. ձեռագրաց Նոր-Զուղայի. անտիպ): Ձեռագրին գրիչը չէ յիշուած յանուանէ:

5. Աստուածաշունչ (1269). ա. «Զստացող տառիս զտէր Յոհանէս բարունի, զեղբայր թագաւորին (Հեթմոյ Ա.) յիշեսլիք ի Տէր եւ զծնաւդսն նորին ամենայն զարմաւ իւրովք, ո՛վ աստուածասէր ընթերցողք. ընդ նմին եւ զանպիտան զծողս Բ՛Ղ (Բարսեղ) եւ զծնաւդսն իմ...» (թղ. 39ա, ի վերջ Ծննդոց գրքին):

Բ. 144ա. «Սուրբ մարգարէիս բարեխաւսութեամբ... Բրիստոս Աստուած ողորմեաց ստացողի տառիս տէր Յոհանէսի բարունայ եղբար արքայի... աղաչեմ յիշել եւ զմե-

ղապարտ զծողս Բ՛Ղ...: Յայս ամի փոխեցաւ առ Բրիստոս թագաւորն Հեթում († 1269 հոկտ. 29), որոյ հանգիստ պարգեւեցէ Բրիստոս Աստուած եւ ընդ սուրբ թագաւորսն զասեցէ զհոգի նորա: Եւ յաջորդէ զաթոռ նորին որդի իւր Լեւոն...»: Այլ գրով. «Ստացողիս եւ ուղղողիս Յոհ՛ն եպ՛ թողութիւն տացէ Բրիստոս...» (թղ. 144ա):

Գ. «Զստացող տառիս զտէր Յոհանէս բարունի յիշեսլիք ի Տէր եւ զծնողսն իւր. ընդ նմին եւ զՅոհանէս սրբաունեալ քահանայ, որ զաւրինակս ետ: Աղաչեմ յիշել եւ զսուրբ ուխտիս սպասաւորն զերջանիկ կրանաւորն զԹորոս մառնապանն, որ բազում սպաս տարաւ մեզ եւ հոգք» (թղ. 364բ):

Բուն յիշատակարանը ինկած է: Գրչութեան տարին է 1269/70, տեղը կը թուի Ակներ, ուր ծաղկած են Բարսեղ գրիչ եւ Թորոս մառնապան:

Էջմիածին, Թ. 345 (Աստուածաշունչ):

6. Եղեղով ժամանակագրական կարգէն, այս տեղ կը գետեղեմ 1287ին գրուած Աւետարանի մը յիշատակարանները, որոնց Վրէժն է Յովհաննէս արքայեղբայր.

ա. «Գիբակատար զլիցոյն մաքուր անգամք, ... գրող սորա եւ աշխատողս Յոհ՛ն եպիսկոպոս ծնողաւք եւ ընտանեաւք մեր եւ համայն Բրիստոսի երկրպագողաւք յիշեալ լիցուք ի ձէնջ ի բարի. եւ դուք եւս» (թղ. 102ա):

Բ. «Եղկելի ոգիս Յոհ՛ն եպ՛ արքայեղբայր այսմ գրող, ծնողաւք մեր կրկին եւ ընտանեաւք եւ ամենայն ի սա աշխատողաւք յիշեալ լիցուք ի բարին Բրիստոս...» (թղ. 103բ):

Գ. «Երջանիկ անձանցդ տաւնասիրաց եւ աստուածասիրաց պաղատիմ հոգս զատապարտ ծառայակիցս Յոհ՛ն եպ՛ արքայեղբայր ստացող սորա եւ կիսոյն գրող, յիշել ի մեծ լուսափայլ տաւնիս զիս եւ զծնաւդսն իմ եւ զեղբարսն եւ զքոյրսն համայն նոցին ծննդաւք եւ զարմիւք... եւս եւ զի մեզ աշխատողսն կրկին...» (թղ. 348բ):

Դ. Այլ գրով, նորոգչէն յամի 1590. «Փառք... աւարտեցաւ... գրեալ սուրբ ձեռամբ Ռհաննէս եպիսկոպոսի ի թագաւորութեանն Հայոց Հեթմո, ի սուրբ ուխտն Ակներ կոչեցեալ, ուր, յոլով ամաւք նախ, նոցին կոչեցեալ, ուր, յոլով արդիւնք անդ միաբան էր գրեալ եւ յոլով արդիւնք անդ արարեալ, ի թուականին Հայոց 21,2 (1287) արարեալ ի մարտի ամսոյ ի ԺԳ. ի սուրբ քառասնոր-

դացն պահս. որոց Տէր Աստուած ողորմեցի» (թղ. 349ա). հանուած առանց տարակուսի ձեռագրին բուն յիշատակարանէն, որ կը պակսի այժմ:

Էջմիածին, Թ. 197 (Մագաղաթեայ Աւետարան, նկարագրող): Ասկէ Սիսուան, էջ 535ա:

7. Թէոփիլոսի Ներբողեանին վերջը, զոր գրած է Գրիգոր Լուսաւորչի վրայ. «Չոր եւ մինչեւ ցայժմ ճրագս այս թաքուցեալ էր ընդ մահճաւք եւ ծածկեալ էր ընդ գրուանաւ: Իսկ ի հրամանէն Աստուծոյ յայտնեցաւ սա ի սուրբ վանս յԱրքայկաղնիս. իսկ իմոյ անարժանիս յոգնամեղ եւ անպիտան կրանաւորիս Պաւղոսի ըղձալի փափագանաւք գրեալ եղի ի հոյակապ մայրաքաղաքացեալ սուրբ անապատս Արքայկաղնիս, ի յիշատակ մեղաւոր հոգւոյ իմոյ եւ ծնաւդաց իմոց: Իսկ համբաւ սորա իբրեւ պսակաղարդ թագաւորի՝ հասեալ ի յերկնաման սուրբ եւ աստուածաբնակ անապատն ի յԱկներն, առ լուսազգեստ սուրբ եւ երջանիկ հայրն Ստեփանոս. եւ նորա առաքեալ որակս եւ հրամայեաց գրել եւ աւանդել զսա ի դրունս սուրբ տաճարին Աստուածամաւրն ի պայծառութիւն տաւնի մեր Լուսաւորչին եւ յիշատակ հոգւոյ իւրոյ եւ ծնաւդաց իւրոց եւ իմոյ ամենամեղի: Եւ ես ըստ իմում կարի գրեցի եւ առաքեցի: Եւ աղերսալի պաղատանաւք աղաչեմ, ով սրովբէանման դասք լուսերամից, յիշեսլիք աղաթիւք զաստուածապատուեալ հայրն զՍտեփանոս, զառաջնորդ սուրբ ուխտիս Ականց անապատիս եւ զծնաւդսն իւր եւ զիմաստուն երաժիշան զՄանուէլ, որ ուսով իւրով բերաւ եղեւ ճառիս ի վանս: Եւ զաշխատաւք գրիչս զՊաւղոս եւ զծնաւդսն մեր եւ զամենայն ի Բրիստոս հաւատացեալս. եւ Բրիստոս առ հասարակ յիշաւդաց եւ յիշելացս ողորմեցի: Եւ նմա փառք յաւիտեանս. ամէն» (թղ. 83ա):

Երուսաղէմ, Թ. 89 (Արտաւագղ Արքեպ., Յուրցակ հայ. Ձեռագրաց Երուսաղէմի): Հրտ. Հ. Գ. Զարբանաւեան, Մատենադարան, էջ 472:

Բ. Ի վերջ Պատմութեան Վարուց Ներսիս Շնորհաւրոյ (թղ. 159բ). «Իսկ ի թուականութեանս Հայոց 21Բ (1273), զկնի ձԱ ամի վերափոխման սրբոյ հայրապետին Ներսիսի, ի հրամանէ հաւր Ստեփանոսէ աստուածաղարդ ձերոյ եւ սպասաւորէ սուրբ

ուխտիս Ականց անապատիս շարագրեցաւ<sup>31</sup> Պատմութիւն սուրբ հայրապետին Ներսիսի եւ իւրոց նախնեացն ճշմարտաճառ եւ անսուտ պատմութեամբ, ի ժամանակս քրիստոսապատկեալ բարեպաշտ թագաւորին Հայոց Լեւոնի որդւոյ թագաւորին Հեթմոյ, յաշխարհիս Կիլիկիցոց: Արդ վայելողք սրբոցս արանցս պատմութեան յիշեալիք սիրով ի Գրիստոս զվերոյնշանակեալ պատուական հայրն Ստեփանոս եւ զամենայն եղբայրութիւն սուրբ ուխտիս զմեծ եւ զփոքր, զբազանայ եւ զկրանաւոր...: Յիշեցէ՛ Գրիստոս Աստուած եւ զՎարդան փակակալ սուրբ տաճարիս: Դարձեալ... յիշեալիք զիս զանարժանս Ղազար... եւ զեղբայրն իմ զԱւետիքն... եւ զկոկող նիւթիս զպատուական քահանայն Գերովբէ...: — Ով մանգունք եկեղեցւոյ... զՄանուէլ յիշեալիք, զի սակաւ մի եւ մեք աշխատեցաք ի կաղմած գրոցս...» (Թղ. 160ա):

Երուսաղէմ, Թ. 89, Թղ. 159բ (Հաւաքածոյք): Նոյնը նաեւ Թ. 32: Բաղուածաբար՝ Միութիւն հանդէս Հաշտենից. 1 (1860), Թ. 6, էջ 42: Նոյնը Զմմատի Թ. 296, Թղ. 62ա. առկէ հրտ. Կիւլէսէրեան, Պատմութիւն կաթողիկոսաց Սոյ, էջ 310—311:

8. Միքայէլ Ասորւոյ ժամանակագրութեան եւ Յաղագս քահանայութեան ճառին վերջը.

«Արդ ես նուաստս յամենայնի Ստեփանոս հայր Ականց անապատիս, ետու գրել զՊատմութիւն տեառն Միխայէլի պատրիարքի Ասորւոց... եւ զՊատմութիւն Տաթարին, այսինքն աղպին Նետողաց ԽԴ. ամաց գործելոց մինչեւ առ մեզ...»

«Արդ ես եղկելի գրիչս Գրիգոր աղաչեմ զպատահեալսք ի սմա, յորժամ ընթեանոյք զարարածապատում պատմութիւնս, ասացէք Տէր Աստուած ողորմեսցի հօր Ստեփաննոսի առաջնորդի սուրբ ուխտին Ակներոյս եւ ամենայն ննջեցելոց իւրոց. ողորմեսցի Գրիստոս Աստուած փակակալ Վարդանայ եւ ծնողաց իւրոց. Տէր Աստուած ողորմեսցի ամենայն գործաւորաց եւ սպասաւորաց սրբոյ»

<sup>31</sup> Երուսաղէմի Թ. 146 եւ Զմմատի Թ. 40 հ. ունի «Իսկ ի թուականութեանս Հայոց ՈՁԹ (1240), զինի եւթանասուն եւ եթն ամի վերափոխման սրբոյ հայրապետին Ներսիսի, ի հրամանէ եւ ի յորդորմանէ սուրբ վարդապետին Յովհաննու եւ Գրիգորիս գրիչ ծառայ զարգապետին Յովհաննու եւ Գրիգորիս գրիչ ծառայ զարգապետին Յովհաննու յարագրեցի... բարեպաշտ թաճառայիցն Գրիստոսի յարագրեցի...»: Նոյնը հրտ. Սոփերք Հայկական, ԺԴ (1854), 83, որ չունի ընդգծուած սողերը:

ուխտիս, առաջնոցն եւ միջնոցս, այլ եւ վերջնոցն որ գալոց են զինի մեր. ողորմեսցի Գրիստոս Աստուած Կոստանդ եւ Սիոն քահանայիցն եւ համաշունչ եղբարցն, որ զթուղաս կոկեցին: Եւ ի վերայ այսր ամենայնի յիշեցէք յողորմութիւնն Աստուծոյ զտառապեալ գրիչս, զի բաղում աշխատանօք եւ տկար մարմնով գրեցի...: Յիշեցէք ի Գրիստոս եւ զպատուական քահանայս զՅովհաննէս, որ զվերջին տետրս գրեաց, զի մեք էաք յոյժ տկար եւ անխել: Յիշեցէք եւ զտէր Թաղէոս զհայր Աւագ անապատին, որ զօրինակս շնորհեաց: Եւ Գրիստոսի Աստուծոյ մերոյ փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն»:

Երուսաղէմ, Թ. 89: Հրտ. Ժամանակագրութիւն տեառն Միխայէլի Ասորւոց պատրիարքի. Երուսաղէմ, 1871, էջ 45 (ի վերջ Յղ. Բահանայութեան ճառին):

Բ. Թաթարաց Պատմութեան վերջը.

«Յամի եւթն հարիւրերորդի քսաներորդի <երկրորդի> թուականութեանս Հայոց (1273) գրեցաւ աշխարհապատում տառս այս հրամանաւ սուրբ եւ փառաւորեալ հօր Ստեփաննոսի Ականց անապատիս, այլ եւ կամակարգութեամբ փակակալի սուրբ անապատիս Վարդանայ եւ ամենայն եղբայրութեանս՝ քահանայից եւ կրօնաւորաց, ձեռամբ տառապեալ զրչի Գրիգորոյ սպասաւորի բանին: Արդ աղաչեմք զպատահեալսք ի սմա, որ ուր ընթեանոյք զաշխարհապատում տառս զայս յիշեցէք ի Գրիստոս զհայրն Ստեփաննոս եւ զծնողն իւր. ընդ նմին եւ զամենայն եղբայրութիւնս սրբոյ անապատիս, զքահանայիցն եւ զկրօնաւորքս եւ զմեղուցեալ գրիչս. զի գուք որ յիշէք զմեզ, յիշեցէք եւ զձեզ Գրիստոս Աստուած յողորմութիւն իւր. ամէն»:

Յիշատակարանս հրատարակուած է Թաթարաց պատմութեան վերջը, Երուսաղէմ, 1870, էջ 71:

9ա. Վահրամ վարդապետի ճառն «Յատկապէս սրբոյ Երրորդութեան», օրինակուած 1285ին, ունի վերջաւորութեան յիշատակագրութիւնս. «Այլ եւ ստացողի սորա տեառն Ստեփաննոսի արքեպիսկոպոսի մայրաքաղաքին Տարսուսի: Թվին 217: 2Գրիգոր մեղաւորս անձն սպասաւոր բանի, որ բազում տառապանօք եւ տկար անձամբ զժաղերեցի զբանս աստուածաբանականս, յիշեալիք յառի՞ զօթս հանդերձ ծնողք եւ վարդապետօք»:

Այսպէս Վիեննայի Թ. 77 ձեռագրութիւն (ԺԼ.—ԺԹ. դարէ) նախագաղափար օրինակ

կին մէջ (Տաշեան, Յուցակ, էջ 331): Թէեւ է յիշուած Ակների վանքը, բայց գրիչն Գրիգոր առանց տարակուսի նոյն է նախորդ (Թ. Տա եւ բ) յիշատակարաններու գրչին հետ:

9բ. «Յամի 1293 գրեալ է ուրեք այս հակերճ յիշատակարան. 2սուրբ գիրս այս՝ զՍաղմոսաց Մեկնիչս Յոհաննէս ձլուզ վարդապետ ի յիւր մահուն օրն՝ պարգեւել էր Ակներոյ վանացս, իւր հոգոյն յիշատակ: Գրիստոս Աստուած հանգուցէ զիւր հոգին»:

Սիսուան, էջ 154բ:

10ա. «Փառք... ի թագաւորութեանս Հայոց Աւնի եւ ի հայրապետութեան տեառն Կոստանդ. եւ ի թուականութեանս Հայոց 244 (1312), գրեցաւ գիրս այս, որ կոչի Շարահնոց, ձեռամբ Ներսիսի բաղմամեղի, ի խնդրոյ կուսակրան քահանայի Թորոսի: Արդ աղաչեմ զձեզ, որ հանդիպիք եւ տեսանէք զգիրս զայս, խոշորութեան եւ սղալանացս անմեղազէր լերուք եւ գրողի սորա մեղաց թողութիւն խնդրեցէք եւ եղբարց իմոց Յովհաննէսի եւ Թորոսի եւ ծնողաց իմոց, ընդ նմին եւ Թորոսի քահանայի ստացողի սորա, որ ետ գրել զսա ի յիշատակ իւր եւ ծնողաց իւրոց. Տէր Յիսուս ողորմեա Գրիգորի քահանայի, որ այժմ հայր է Ականց անապատին, որ սկիզբն արար գրոցս եւ գրեաց մինչեւ յՈրոտմանցն շարականն» (Թղ. 349բ):

Բ. «Ո եղբարք, աղաչեմ յիշել զեղկելի գրիչս Գրիգոր գպլեր, որ զգիրս խաղեցի եւ զարդարեցի ոսկով եւ ծաղկիւ...»:

Գ. «Զմեղաւք զտառապարտեալ կաղմող սորա զՅակոբ երէց Մեծալրենց եւ զծնաւորն իմ եւ զազգայինս աղաչեմ յիշելի Տէր»:

Լոնդոն, British Museum, Թ. 46 (Conybeare, Catalogue, p. 95):

10բ. Չեռագրիս կաղմողն Յակոբ երէց Մեծալրենցն (ա՛յսպէս կարգա՛) կը յիշուի նաեւ Սեբաստիոյ 1309ին գրուած Աւետարանին մէջ, որուն գրիչն է Ստեփանոս սարկաւազ, իսկ գրութեան տեղը անձանօթ. էջ 533, Յովհաննու Աւետարան վերջը կը յիշատակագրուի. «Փառք փրկչին եւ յիշատակ մեղաւորիս Ստեփաննոսի սարկալարոյ: — Ո՛հ ցնուաստ կաղմալ պատուածախաւս մատենիս զՅակոբ Մեծալրենցն (տպ. մեծալարոնեայ) աղաչեմ յիշել ի Տէր Յիսուս... ի Թղ. 2ԾԸ (1309) կաղմեցաւ սայ ընդ հոգևանեալ Տղայ սուրբ Գորգոյ» (Թորգոմ Եպ.

Գուշակեան, Յուցակ, Հանդ. Ամս. 1924, էջ 518—519):

10գ. Երուսաղէմի Թ. 1331, Փիլոն Եբրայեցւոյ գործերը օրինակած է Ներսէս գրիչ ի պէտս Վարդանայ բանի սպասաւորի: Գրչութեան տեղն եւ տարին անձանօթ է: Հաւանօրէն Ակներ գրուած:

11ա. «Կատարեցաւ Կցորդք ասացուածք Եփրեմի երանելոյ ձեռամբ անարհեստ գրողի Գրիգորի սպասաւորի Ակներոյ վանիցս, ի Թղ. 244 (1313): Ի սոյն ամի սկիզբն արարաք շինման բերդին որ ի Բարտիղիմոցն» (Թղ. 74բ):

Բ. «Բժշկեա, Տէր, աստուածային սպեղանաւք քո զխրիստոսի վէրս հոգւոյ գրողական սուրբ մատենիս՝ Գրիգորի սպասաւորի սուրբ անապատիս Ակներոյ...» (Թղ. 242ա, սխալ զետեղուած): — ԽԲ. Կցորդին վերջը. «Անկերթ վերակացուիս սրբոյ անապատիս ողորմեա Տէր իմ Յիսուս»: Գրիգորի գրչն են Թղ. 1ա—98բ:

Գ. «Զստացաւ գրոյս զերջանիկ հայրն իմ բոս հոգոյ զԳրիգ(որ) քահանայ եւ զանարժան գրիչս զՅոհաննէս յիշեալիք» (Թղ. 128ա):

Դ. «Այնմ բնակութեան արժանի արացէ Գրիստոս Աստուած զստացաւ գրոցս զԳրիգոր, զառաջնորդ անապատիս» (Թղ. 181ա):

Ե. «Յաւուր Նընջման սրբոյն Գրիգորի, սեպտե՛ Լ. մի ոմն մանկագոյն քահանայ վաղանցեալ, որոյ ողորմեսցի Գրիստոս: Կոստ՛: Ճանեցաւ, որոյ ողորմեսցի Գրիգորի»:

Կապ՛ (Թղ. 142բ—143ա լուսանցքին): Իջմիածին, Թ. 821 (Ժողովածոյք ճառեկան, Յուցակ, էջ 661. եւ Զարբանաւեան, Մատենադարան, էջ 466 (մասամբ):

11բ. «Փառք... Ծնորհիւ Տեառն սկսայ եւ ողորմութեամբ նորին աւարտեցաւ... Աւետարանս... ձեռամբ յոգնամեղ գրչի Ներսէս Կլայցո մեղաւորի ի վայելումն անձին իւրոյ...: Արդ գրեցաւ սա ի յանապատս որ կոչի Ակներ, ընդ հովանեաւ սուրբ Նշանիս եւ սուրբ Յակոբայ... ի թագաւորութեան Աւնի բարեպաշտի եւ ի հայրապետութեան Տեառն Կոստանդեայ Կեսար(ա)ց(ւոյ), ի թուիս 244 (1313)»:

Նոր Զուղայ, Աւետարան Ս. Գրիգոր եւ Ս. Գէորգ Եկեղեցւոյ (Տէր—Աւետիսեան, Յուցակ, Թ. 40):

11գ. Հայոց 244 (1314) թուին «Ես Պաւղոս վարդապետ աշխարհաւ Կիլիկիցի,



նաև որն եւ զՍարգիսն եւ զԹորոսն, զառաջացեալն առ Քրիստոս...: Յիշես՛ ի իմ որդաւք իւրովք եւ զհոգեւոր հայրն իմ զԿոստանդին զաւակաւք իւրովք: Աղաչեմ յիշել ի Տէր եւ զքեռորդիսն իմ զԿոստ' քահանայ եւ զհայրն իւր զՍիմեոն երէց եւ զմայրն իւր եւ զքորսն եւ զամուսինն իւր եւ զաստուածատուր որդին իւր զՊետրոսն եւ զգետերսն...: Յիշես՛ ի Տէր եւ զեղբաւր որդիսն իմ...:

«Ողորմեացի Քրիստոս Աստուած կուսակրան քահանայիցն Գրիգորի եւ Սէրովբէին, որք յորդէին աշխատեցան...: Ողորմեացի Քրիստոս Բարսեղ քահանային եւ ծնաւդացն իւրոց, որ զգիրքս կազմեաց, եւ Կարապետին, որ ծաղկեաց. եւ խոշորութեան գրոյս եւ սղալանացս որ ի սմա անմեղազիր լերուք» (Թղ. 367բ—369ա):

Բ. Թղ. 297բ. «Արդ... մեղաց թողութիւն խնդրեցէք յԱստուծոյ ստացողի եւ գրողի գրոցս բաղամեղիս Գրիգորի... նաեւ ամենայն միաբան եղբարցս Ականց անապատիս...»: Նոյնիմաստ յիշատակագրութիւն մը նաեւ Թղ. 179ա:

Էջմիածին, Թ. 1414 (Յովհ. Ոսկերբերանի Մեկնութիւն Ա. եւ Բ. Թղթոցն Տիմոթէոսի եւ Թղթոցն Տիտոսի): Ասկէ Սիսուան, 535ա:

16բ. Գրիգոր Նարեկացոյ Այոթամատոյց մը գրուած է 1326ին ի ձեռն Սերովբէ գրչի որդւոյ Ներսէսի Յատուտ գաւառի «ի հոչակաւոր անապատիս Ակներ կոչեցեալ, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս եւ այլ սրբոցս. ի յոյժ ազնիւ աւրինակէ, զոր է ուղղեալ մեծիմաստ եւ սուրբ վարդապետն Գէորգ Լամբրունեցի, ձեռամբ ամենաթշուառի Կարապետի...: Գրեցաւ սա ի թուին Հայոց 22Ը (1329). ի հայրապետութեան տեառն Յակովբայ եւ ի թագաւորութեան Հայոց Լեւոնի որդւոյ Աւչինի: Արդ... յիշես՛ ի իմ զհորեղբայրն իմ զՎարդան քահանայ եւ զմորեղբայրն իմ զԿարապետ գուսուցիչն իմ...: Աղաչեմ յիշել ի Տէր գարբեամբ նահատակեալ քահանայ զՎարդան, որ զաւրինակս էր գրե(ա)լ: Յիշես՛ ի Տէր

Սիսուան, էջ 153:

17. «Փառք...: Գրեցաւ սա ի Կիլիկիացոց աշխարհն ի լեռնային կողմանս, յաստուածաբնակ եւ ի հոչակաւոր ուխտս Ակներ կոչեցեալ, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս եւ այլ սրբոցս. ի յոյժ ազնիւ աւրինակէ, զոր է ուղղեալ մեծիմաստ եւ սուրբ վարդապետն Գէորգ Լամբրունեցի, ձեռամբ ամենաթշուառի Կարապետի...: Գրեցաւ սա ի թուին Հայոց 22Ը (1329). ի հայրապետութեան տեառն Յակովբայ եւ ի թագաւորութեան Հայոց Լեւոնի որդւոյ Աւչինի: Արդ... յիշես՛ ի իմ զհորեղբայրն իմ զՎարդան քահանայ եւ զմորեղբայրն իմ զԿարապետ գուսուցիչն իմ...: Աղաչեմ յիշել ի Տէր գարբեամբ նահատակեալ քահանայ զՎարդան, որ զաւրինակս էր գրե(ա)լ: Յիշես՛ ի Տէր

եւ զԹորոս քահանայ, որ յուղղէն եւ ի հետեւին աշխատեցաւ...: Աղաչեմ յիշել զժանտատես գրող սորա եւ զկազմաւ զԿարապետ...: Յիշես՛ ի Տէր եւ զՍարգիս քահանայ եւ զծնաւ իւր, որ զգիրքս ծաղկազարդեաց...»: Նոր Զուգայ, Ս. Գրիգոր եւ Ս. Գէորգ եկեղեցւոյ Աւետարան (Տէր-Աւետիսեան, Յուլի, Թ. 42):

18. Յովհաննէս Ոսկերբերանի Մեկնութիւն Մատթէի. «Գրեցաւ ի թուականութեան Հայոց 22Ը (1329). ի թագաւորութեան Լեւոնի աստուածասիրի որդւոյ Աւչինի եւ ի կաթողիկոսութեան տեառն Յակովբայ, ընդ հովանեաւ քաջայաղթ վկայարանիս, որ կոչի Զորոյն սուրբ Թորոս. ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ աւրհներշոյն յաւիտեանս. ամէն: Ողորմեացի Քրիստոս Աստուած Կարապետ քահանայի եւ ծնողաց իւրոց, որ զմայրն ծաղկեաց ծաղկազարդեաց» (լուսատիպ՝ Սիսուան, 156):

Գրիչն է Գրիգոր, որ կը մաղթէ յիշել «գմիարան եղբայրութիւն հրեշտակաբնակ ուխտին Ակներոյ զհոգեւոր հարքն մեր՝ գծերունի սուրբ վարդապետն. զտէր Վարդան եւ զԿարապետ զքահանայն զՍտեփանոս փակակալն եւ զԳրիգորն եւ զԿոստանդին հեղահոգիսն եւ զԹորոս ժառանկն, որ ի վերայ ամենայն երախտեացն, զոր արարեալ էին մեզ, յաւելին եւ զայս, եւ լցին զփափագ սրտի իմոյ, եւ շնորհեցին զօրինակն, որ գրեցի զսա...: Եւ յիշման արժանին զսուրբ քահանայն՝ զարեամբ նահատակն զՎարդան, որ բազում տառապանօք էր գրեալ զօրինակս, երիս օրինակս ունելով, եւ մեզ զիւր ճանապարհ էր կազմեալ»: Կը յիշէ նաեւ ուրիշ շատերը, այսպէս Յովհաննէս քահանայ եւ անոր եղբայրն «Մարտիրոս սարկաւազ, որ զթուղթս կոկեաց», հոգեւոր հայրերն՝ Գրիգոր միակեց եւ եղբայրն՝ Մարտիրոս, որոնք եղբորորդիքն են Սամուէլ քահանայի արեամբ նահատակելոյ, «զորոց, կ'ըսէ, ի մանկութենէ գոհ էի, եւս առաւել այժմ, զի գոունս ետուն, որ հանդեպ ի գրելս, եւ յորդորող էին միշտ». այսպէս նաեւ Ստեփանոս քահանայ եւ Վասիլ մառնպան. «զի եւ նա մեզ էր ողորմած». եւ քահանայքն Մարտիրոս, «որ զգիրքս կազմեաց», Կարապետ, Յովաննէս, Յովհաննէս միւս, Դաւիթ, Միսաս, Պետրոս, Պաւղոս եւ Սերովբէ:

Հ. Ղ. Ալիշան, Սիսուան, էջ 155:

19ա. «Փառք...: Գրեցաւ սա ի Կիլիկիացոց աշխարհի ի լեռնային կողմանս, ընդ հովանեաւ վկայարանիս որ կոչի Զորոյն սուրբ Թորոս ի ||| ազնիւ աւրինակէ, ձեռամբ ամենաթշուառի Գրիգորի ժանտատես գրող եւ բաղամաղթ մտաւք...: Եւ գրեցաւ սա ի թուականութեան Հայոց 22 (1331) ի հայրապետութեան տեառն Յակովբայ եւ ի թագաւորութեան Հայոց Լեւոնի որդւոյ Աւչինի: Արդ որք սրատահիք սուրբ տառիս յիշես՛ ի իմ զեղեկի գրողիկս Գրիգոր եւ զծնաւդան իմ՝ զհայրն իմ զՎահրամ եւ զմայրն եւ զզորեակն եղբարսն իմ զՍտեփանոս քահանայ եւ զԱնդրէասն եւ զՍարգիսն եւ զԹորոսն եւ զՍիմեոն քահանայ, զքեռին իմ եւ զորդին իւր մէնփ քահանայ, զքեռին իմ եւ զորդին իւր զԿոստանդին քահանայ եւ զամուսինն իւր եւ զորդիս նոցին: Աղաչեմ յիշել ի Տէր զՅիշման արժանին զսուրբ վարդապետն զտէր Վարդան, որ միշտ խրատու է մեզ ի բարիս եւ յորդորաւ ||| սուրբ տառիս զաւրինակն շնորհեաց, գրեցէ ||| Քիւրն ||| աւրինակին գրաւդն. եւ զԿարապետ քահանայ, որ զիւր Աւետարանն ետ, որ զկանաչ գլխաւ համարսն գրեցի, եւ զՍտեփանոս քահանայ, որ յուղղէն ընդ մեզ աշխատեցաւ, յիշես՛ ի Քրիստոս եւ զՅովհաննէս քահանայ, որ զթուղթս կոկեաց եւ զՍտեփանոսն որ զհամարաբանս գրեաց |||: Կեսարիա, Ս. Կարապետի վանքի Նոր Մատենադարան, Թ. 16 (Աւետարան, Տրդատեալ. Պալեան, Յուլի, անտիպ):

Այս տեղ կը յիշեմ նաեւ Յիշատակավանեաւ սուրբ Աստուածածնին եւ սուրբ Նշանին մերձ յաստուածապահ ամրոցն, որ կոչի Անդրունին բերդ, ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ աւրհներշոյն յաւիտեանս. Ստուծոյ մերոյ աւրհներշոյն յաւիտեանս...: Ողորմեացի Քրիստոս Աստուած ամէն...: Ողորմեացի, որ աշխատեցաւ ընդ Յովանէս քահանայի, որ աշխատեցաւ ընդ մեզ յորդելի գրոցս աւրինական, եւ կրաւնաւորացն ճաւֆրունին եւ Պաւղոսին եւ Թորոսին, առ որովք հանգաք ի գրելն...» (Թղ. 418ա):

19բ. «Յամի 2Ծ (1301) թուականութեան Հայոց եկն այր մի աստուածասէր եւ բարեպաշտ Միսիթար անուն եւ միաբանեցաւ սրբոյ ուխտիս Սուրբ Թորոսի եւ սրբոյ նշանիս. լինել մասնակից աղաթից եւ պատարագաց եւ երբը ընծայս յարդար ընչից իւրոց եղինս երկուս»:

Էջմիածին, Գէորգեան Բաթին, Թ. 23, 107ա (Հայաստան, 1851, Թ. 51. Macler, Rapport sur une mission scientifique, p. 39):

20. Յովհաննէս Ոսկերբերանի Մեկնութիւն Յովհաննու. «Ք լրման տառատպութեան լիակատար գոհութիւն Աստուծոյ...:

Չոր տեսեալ զսրբոյ աւետարանին թարգմանութիւնս որ ըստ Յովհաննու՝ բաղամեղ եւ տրուպս Գրիգոր, գրեցի զսա եւ ստացայ ի վայելումն մանկանց նոր Սիոնի եւ ինձ եւ ծնողաց իմոց եւ եղբարց, յոյժ ցաւած անձամբ հոգեկանաւք եւ մարմնականաւք, ոչ զոր ունելով ձեռնառու ի գրելն, այդ միայն զողորմութիւնն Աստուծոյ եւ զաւրինականութիւն սրբոց իւրոց: Եւ արդ... յիշես՛ ի իմ զաւրինակն շնորհեցին եւ զիմբէնն, որ գրեալն էր զաւրինակն, եւ զՎասիլ ճգնաւորն եւ զծնաւդս նոցին եւ զեղբարս...: Յիշես՛ ի Տէր եւ զայնուսիկ, որ ի գին թղթոյս եւ հացկանն մերոյ երախտիք ունին, եւ զԱնպէտն եւ զծնաւդսն իւր, զի եւ նա ետ մեզ հաց...: Եւ ի վերջոյ... զժանտատիս գրաւդս եւ ստացաւ զԳրիգոր եւ զհայրն իմ զՎահրամ եւ զմայրն եւ զեղբարսն՝ զԱնդրէաս եւ զՍարգիս եւ զԹորոս զյառաջեալսն առ Քրիստոս եւ զմիւս եղբայրս զպաւտելի քահանայն զՍտեփանոս եւ զՍիմեոն տուելի քահանայն զՍտեփանոսն եւ զՍիմեոն երէց զքեռի իմ եւ զորդի իւր զԿոստանդին քահանայ եւ զմանկունսն իւր, եւ զՍիլայն եւ զորդիսն իւր եւ զամենայն աղապիսն մեր...: Գրեցաւ ի թուականութեան Հայոց 22Ա (1332), ի թագաւորութեան Լեւոնի աստուածասիրի, որդւոյ Աւչինի եւ ի կաթողիկոսութեան տեառն Յակովբայ. ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին եւ սուրբ Նշանին մերձ յաստուածապահ ամրոցն, որ կոչի Անդրունին բերդ, ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ աւրհներշոյն յաւիտեանս...: Ողորմեացի Քրիստոս Աստուած ամէն...: Ողորմեացի, որ աշխատեցաւ ընդ մեզ յորդելի գրոցս աւրինական, եւ կրաւնաւորացն ճաւֆրունին եւ Պաւղոսին եւ Թորոսին, առ որովք հանգաք ի գրելն...» (Թղ. 418ա):

Գ. Թղ. 3ա. Յանուն Աստուծոյ սկսայ մայիս ԻԹ. յիշատակի ՅԹԸ Հայրապետացն Նիկիայ սուրբ Ժող(ովոյն). աւգնեա ինձ Տէր Յիսուս:

Գ. Թղ. 104բ. Ստեփանոս եւ Առաքել եւ այլ եղբարք «ի գին թղթոցս» օգնական կ'ըլլան:

Գ. 180ա. «Զժուժկալ եւ զփոյթն յաստուածային բանից ընթերցումն եւ զհամբե-

բողն ի խտտակրանս պահս եւ յաղաթս՝ դեր-  
ջանիկ ծերունի սուրբ վարդապետն զտէր  
Վարդան, զյորդորդն մեր ի գրել զբոց ա-  
ղաչեմ յիշել ի Տէր. եւ զՍտեփանոս փակա-  
կալ Ականց վանացն, որ զաւրինակս շնոր-  
հեաց, եւ զՄխիթար հայրն եւ զայլ մխարան  
եղբայրութիւնն, որ կամակից եղեն ի տալն,  
յիշեսջիք ի Տէր...»:

Ե. Թղ. 217բ. «Բրիստոս Աստուած...  
փրկեա... եւս առաւել զԹորոս նաւտարն եւ  
զորդին իւր զԱնպէտն եւ զմայր նորին եւ  
զեղկելիս Գրիգոր...»:

Գ. Թղ. 379բ. «Ողորմեացի Բրիստոս Աս-  
տուած հոգեւոր եղբարցն մերոց Սարգսին եւ  
Վասլին եւ Անտոնին...»:

Է. Թղ. 422բ. Մինաս քահանայ կը նուիրէ  
վերջին թերթին թուղթը:

Էջմիածին, Թ. 1347:

21. Այս տեղ կը գետեղեմ նաեւ յետա-  
գայ յիշատակարանը, ուր թէեւ գրութեան  
տեղը յանուանէ չէ յիշուած, բայց ըլլալու է  
Ակներ:

«Փառք...: Գրեցաւ սա ի Կիլիկիացոցս  
աշխարհ, ի թուականութեանս Հայոց 229  
(1334) ի հայրապետութեան տեան Յակո-  
բայ եւ ի թագաւորութեանս Հայոց Լեւոնի  
որդւոյ Աւչնի արքայի, <ի հոչակաւոր ուխտս  
Ակներ կոչեցեալ> ընդ հովանեաւ սուրբ  
Աստուածածնիս եւ սուրբ Նշանիս, ձեռամբ  
ամենաթշուառ Գրիգորի, ժանտատես գրով  
եւ բաղմաչիոթ մտաւք. ի խնդրոյ հոգեւոր  
եղբաւր մերում պատուական եւ սրբասնեալ  
քահանային Պաւղոսի, որ ստացաւ զսա ի  
վայելուին անձին իւրոյ եւ յիշատակ բարի  
իւր եւ ծնողաց իւրոց եւ եղբարց: Արդ...  
յիշեսջիք ի Տէր զպատուելի քահանայն Պաւ-  
ղոս եւ զհայրն իւր զԿարապետ եւ զմայրն  
իւր եւ զեղբարսն՝ զՄարտինոս եւ զԳէորդ  
զյառաջեալսն առ Բրիստոս եւ զմիւս եղ-  
բայրն զԿոստանդին եւ զբոյրն Աղբրաց եւ  
զայր նորին Գրիգոր, եւ զհոգեւոր որդին  
իւր զՅովանէս եւ զհայր նորին զԱնպէտ ոս-  
կերիչ զհանգուցեալն ի Բրիստոս եւ զեղբայր  
իւր զԿոստանդին եւ զամենայն ազգայինս նո-  
ցա... ամէն...: Յիշեսջիք ի Տէր զեղկելի  
գրողիկս Գրիգոր եւ զհայրն իմ զՎահրամ  
եւ զչորեսին եղբարսն զՍտեփանոս քահանայ  
եւ զԱնդրէասն եւ զՍարգիսն եւ զԹորոսն եւ  
զամենայն ազգայինս մեր...»:

Վենետիկ, Թ. 164 (Աւետարան, Սար-  
գիսեան, Յուցակ, Ա., էջ 698):

22. «Փառք...: Յամբ եւթնհարիւրորդի  
ութաներորդի երրորդի (1334) թուական(ի)»  
Հայոց տուամարի, գրեցաւ սուրբ Աւետարանս  
այս ձեռամբ եռաթշուառ անձին Սէրովբէի  
ի խնդրոյ պատուելի քահանայի Վասլի ի  
վայելուին...: Գրեցաւ սա ի թագաւորու-  
թեան Հայոց Լեւոնի եւ ի հայրապետութեան  
տեան Յակոբայ ի յԱկանց անապատին, ընդ  
հովանեաւ սուրբ Աստուածածնին եւ սուրբ  
Յակովբայ եւ այլ բաղմահաւաք սրբոց...:  
Նաեւ զեղկելիս զանարժան նուաստ ծառայս  
զԴաւիթ ծաղկաւղս յիշեսջիք եւ զպատուելի  
քահանայ զՊաւղոս, եւ զուր յիշեալ լիջիք ի  
Բրիստոսէ...»:

Կեսարիա, Թ. 11 (Աւետարան, Տրդատ  
եպ. Պաւեան, Յուցակ Ս. Կարապետի վա-  
նաց Նոր Մատենադարանի. անտիպ):

23. «Եւ արդ եղև զրաւ գրչութեան  
սորա ի թուականութեանս Հայոց 229  
(1335). յաստուածարնակ ուխտս Ակներ, ընդ  
հովանեաւ Տիրամաւր Աստուածածնիս եւ  
այլ բաղմահաւաքեալ սրբոցս, ի հայրապե-  
տութեան տեան Յակովբայ եւ ի թագաւոր-  
ութեանս Հայոց չորրորդ Լեւոնի» (տողերս  
նմանահանութեամբ՝ Սիսուան, էջ 155):

Հ. Ղ. Ալիշան յառաջ կը բերէ նաեւ հե-  
տեւաները. «Յառաջ ժամանակաւ ետ գրել  
(Գրիգոր) զՔաղաքավարութիւն աստուածա-  
բան աւետարանչին Յովհաննու եւ զՎարս  
սրբոյ հօրն մերոյ Յոհաննու Ոսկերեանի,  
նաեւ զճովահանաւոր Մեկնութիւն սորա, որ  
զտանն Թղթոցն սրբոյն Պաւղոսի եւ զաս-  
տուածաշունչ Քնարս Դաւթի մարգարէին,  
Չեռնազրութեան գրովն: Իսկ փակակալն  
Վարդան եւ վերասացեալն Գրիգոր խնդիր  
արարին յաղագս գրոյս այսորիկ» (այսինքն  
Կանոնաց ինչ Մաշտոցի Յունաց, զոր եւ  
ստանայ յիշեալք Գրիգոր քահանայ եղբոր-  
որդի Անտոնի կուսակրօն միակեցի: Իսկ վասն  
միւսոյ Գրիգորի ասէ). «Ծերունւոյ քահա-  
նայի, հեղի եւ իմաստասիրի, որ հայրօրէնա-  
բար ի մանկական տիոց խնամէ զիւր աս-  
տուածային բանիկ»: (Չմի յերկուց Գրիգո-  
րեանցն զարձեալ որոշակի Ակներցի կոչէ,  
եւ ի խնդրոյ նորին ամօք յառաջ, 1332,  
թարգմանեալ է ի յունէ զԿանոն վերագարձի  
յուրացութենէ՝ ի ձեռն Կոստանդեայ երիցու,  
յԱնդրուս գիւղ:)

Այս կանոնին հայոց տողերն են. «Թարգ-  
մանեցաւ ի յունականէն ի մերս ի ձեռն Կոս-  
տանդեա իրիցու, յանուանեալ գեղն Ան-

դրուն, ի խնդրոյ Գրիգորի Ակներցոյ, ի թու-  
229» (1332) (լուստիպ՝ Սիսուան, էջ 168):

Սիսուան, էջ 155—156: Յանկալի էր ու-  
նենալ Յիշատակարանս իր ամբողջութեան  
մէջ:

24. Առանց թուականի է հետեւեալ Յի-  
շատակարանը ձեռագրի մը, որ կը պարու-  
նակէ Գրիգոր Նարեկացոյ Աղօթամատոյցն  
եւ Պատմութիւնն Ապարանից Ս. Խաչին,  
որուն գրիչն է Գրիգոր Ակներցի. կը համա-  
րիմ գրուած այս շրջանին (1335):

ա. «Կոստանդին յոյժ վշտացեալ յաշա-  
կերտութիւն սուրբ հաւրս իմն (Գր. Նարե-  
կացոյ) սրբոց շաւղաց, յաղագս անբերելի  
տենչանացն, որով բերէի առ Երանելիս, ի  
պատկերէ բանից աղերսական իւրոց աղա-  
թից տուացեալ, եւ զայս առ ի նմանէ ի հիւ-  
սուած տառի ստանալ, խուզեալ զտի գրեալ  
յաստուածընկալ ձեռաց տեան Ներսէսի Տար-  
սոնի եպիսկոպոսի տիեզերալոյս վարդապետի  
եւ մեծաւ ջանիւ ըստ կարի յարմարեցի շար-  
ժեալ ի սիրոյ: Այդ աղաչեմ զքեզ, Հայր իմ  
սուրբ Գրիգոր Նարեկացի, նայեա յիմս որ  
առ քեզ սէր անտանելի, որպէս եւ ի քոյդ  
ըզձալին ի քէն Տեառնորդի. եւ ցայտեա յա-  
րատ իմաստիցդ եւ ի շնորհաց քոց հոգի,  
ուստ իմաստիցդ եւ ի շնորհաց քոց հոգի,  
միթէ լիցի աւարտել տառապելոյս զկենցաղս  
սաժանելի եւ այդբ բացաւ երեսաւք ողջա-  
գուրիւ համբուրել զոտս սրբոյդ, հոգւոյս  
սիրելի:

բ. (էջ 181). 2Գրիգոր Ակներցիս աղա-  
չեմ յիշել յաղաթս ձեր, ո՛վ տեսողք եւ  
վայելողք ամին:

գ. (էջ 302). 2Գրիգոր եւ զստացաւ  
բաղբաւաւակ ճառիցս, Գրիգոր Ակներցիս  
աղաչեմ յիշել ի Տէր. եւ Տէր յիշողացդ եւ  
յիշեցեալդ ողորմեսցի. եւ որ զԱմէնն ասէ.  
եւ Բրիստոսի փառք յաւիտեանս:

Հարէպ, Թ. 141 Բառասուն Մանկունք  
Եկեղեցւոյ (Արտաւազ Արքեպ. Սիւրմէեան,  
Յուցակ, Ա., էջ 246):

25. «Եւ արդ գրեցաւ սակաւաղիմ յիշա-  
տակարանս այս ձեռամբ յոյնամեղ եւ անար-  
հեստ գծողի, որոյ անուն Գրիգոր Ակներցի  
սրբօրջի. ի խնդրոյ պատուելի եւ սրբաս-  
նեալ կուսակրան քահանայիցս Յովհաննիսի,  
Մկրտչի, Ստեփանոսի եւ Գրիգորի...: Այլ  
Ատոմ միայնակեցին, որ յոյժ աշխատե-  
ցաւ յընծայարեութիւն սուրբ Աւետարա-  
նիս...»:

Աւետարանս գրուած է 1312ին. իսկ  
1386ին հանուելով Տարօնի Ս. Ղազար վան-  
քէն տարուած է Երուսաղէմ եւ ընծայարե-  
րուած Ս. Յակոբայ: Յիշատակարանիս գրիչ  
Գրիգոր Ակներցի Յիշատակարանին գրիչն է  
միայն, թէ նաեւ Աւետարանը գրուած է  
իրմէ: Պէտք է մանր քննել Երուսաղէմի  
Թ. 1949. իմ տեղեկութիւններս ասնուած են  
Խաղայեան Սահակ կաթողիկոսի ձեռագիր  
Յուցակէն: «Գրիգոր Ակներցի» գրիչ ասա-  
լին անգամ 1335ին երեւան կու գայ:

26. Ինձի կ'երեւայ, թէ Ակներ գրուած  
են նաեւ յետագայ երկու ձեռագիրները:

«Փառք...: Գրեցաւ սա ի Կիլիկիացոցս  
աշխարհի ի թուականութեանս Հայոց 22  
(1331), ի հայրապետութեան տեան Յակո-  
բայ եւ ի թագաւորութիւն Հայոց Լեւոնի  
որդւոյ Աւչնի արքայի, ընդ հովանեաւ Աս-  
տուածածնիս (Չ. աստուածաշինիս) եւ այլ  
կենսակիր սուրբ Նշանացս, ձեռամբ ամենա-  
թշուառի Դաւթի ժանտատես գրով եւ բաղ-  
մաչիոթ մտաւք ի յընտիր սուրինակէ: |||  
Երեւան, Պետ. Թանգարան, Թ. 97:

27. «Փառք...: Գրեցաւ Երզարանս ի  
թվ. Հայոց 228 (1333) ձեռամբ անարհեստ  
գրչի Սարգիս... կրանաւորի, ընդ հովա-  
նեաւ սուրբ Աստուածածնիս ի վանքս որ կոչի  
Ա. ||| ի յիշատակ շնորհալի քահանայի Մա-  
նուէլի... առ ի յիշուին հանդիպողաց հաւր  
իւրոյ Որդանայ (Վարդանո՞յ) եւ մաւր իւրոյ  
Ոսկեհատի եւ եղբարց իւրոց Եւատինէ, Բա-  
մոս |||»:

Leiden, Or. 5525 (Շարակնոց. Macler,  
Rapport d'une mission scientifique en Bel-  
gique..., p. 151):

Այս իբր 40 մեծ եւ փոքր Յիշատակա-  
դրութիւնները չեն ընծայեր անչուշտ ոչ  
վանքին գրասէր միարաններու արտագրու-  
թիւններու լիակատար ցանկը եւ ոչ ալ վան-  
քին ներքին եւ արտաքին կեանքի ամբողջա-  
կան պատկերը: Անոնք պարզապէս կենդա-  
նութեան նշմարներ են, զոյգն յուշեր Ակների  
անցեալէն: Յուսով եմ, թէ մեր ծանօթու-  
թիւնը վանքին մշակութային գործունէու-  
թեան մասին աւելի պիտի ընդարձակուի,  
եթէ աւելի խնամքով ուսումնասիրուին հայ  
ձեռագրական Հաւաքածոյքները Վենետիկ,  
Երուսաղէմ, Երեւան եւ այլուր:

Հ. Պ. ԱԿՆԵԱՆ